Ազգ
Azg
28 ՅՈՒՆՈՒԱՐ 2012 ՇԱԲԱԹ 15(4867)
ISSN: 1829-1651

# Ազգային բանակի 20-րդ տարեդարձը՝ մտորելու առիթ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Այսօր լրանում է Հայաստանի երրորդ Հանրապետության ազգային բանակի ձեւավորման 20 տարին: Բանակը ձեւավորվեց իմ սերնդի հայացքի ներքո: Մենք տեսանք եւ՛ մորուքավոր, մեկ հրացանով ինքնապաշտպանական մարտիկի, եւ՛ աստիճանաբար տեսքի ու կարգի բերվող զինված ուժերի, ու ապա բոլորիս հպարտությունը դարձած ազգային բանակ՝ երիտասարդ մարդիկ արդեն այս բանակի սերնդակիցն ու ականատեսն են եւ չեն պատկերացնում անցած դարի իննսունականների մեր ոգորումներն ազգային բանակը ստեղծելիս: Նախ ստեղծվել էին ինքնապաշտպանական ջոկատները, եւ այն բանից հետո, երբ Խորհրդային Միության փլուզման առաջին շրջանում անհանգիստ էր հայ-ադրբեջանական սահմանը, Սումգայիթ էր եղել, ինչել էին կրակոցներ Երասխավանում, Արցախն էլ ոտքի էր կանգնել՝ պայքարելով իր ազատագրման համար: Այնուհետեւ Հայաստանի անկախության եւ պետական ենթակառուցվածքների ձեւավորմանը զուգահեռ՝ կառավարությունը որոշեց այդ ջոկատները համախմբել մեկ ղեկավարության տակ, ստեղծվեց ՄՀՕՋ-ը, հետո՝ պաշտպանության կոմիտեն, հետագայում արդեն պաշտպանության նախարարությունը եւ կազմակերպված բանակը: Սկզբում մեր ինքնապաշտպանական ջոկատները թրծվեցին արցախյան եւ սահմանամերձ կռիվներում՝ արյան գնով ազատագրելով Արցախը, իսկ հայոց սահմանամերձ բնակավայրերում հարեւան աղմկոտին ցույց տալով իր տեղը: Բայց նաեւ նահանջների (Շահումյան, Գետաշեն) դառնություն էլ զգացինք, եւ այն աստիճան, որ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանն անգամ մահապարտների գումարտակ ստեղծեց: Այն օրերի մասին պաշտպանության նախարար եղած Վազգեն Մանուկյանը «Անկախ» պարբերականում ասել է. «Բանակում հազարավոր տղաներ կային, որոնք համոզված էին, որ մենք կարող ենք հաղթել: Մարդիկ իրար նկատմամբ վստահ էին: Կարեւոր է, որ չմտածեն, թե բանակի ղեկավարությունը պատերազմը վարում է գումար աշխատելու կամ ընկերներին առաջ բրթելու համար: Երբ հավասարության մթնոլորտ ես ստեղծում՝ բանակի կարողությունները կրկնապատկվում են: Յուրաքանչյուր երկրում, անկախ հասարակարգից, մի կառույց կա, որ սոցիալիստական է, դա բանակն է: Մի կողմից հիերարխիա է, մյուս կողմից պատերազմի ժամանակ մարդիկ պետք է վստահ լինեն, որ չեն զոհվում հանուն ինչ-որ մեկի, այլ՝ հանուն հայրենիքի: Կարծում եմ՝ այս մթնոլորտը ստեղծվեց», արցախյան պատերազմի եւ բանակի կազմավորման առաջին տարիների մասին ասել է Վ. Մանուկյանը՝ նշելով, որ խաղաղ պայմաններում կարգապահությունը բարձր չէր բանակում, տարիների ընթացքում կարգապահությունն ավելացավ:

Տես էջ 3




# Վիկտոր Համբարձումյանի մրցանակակիր Միշել Մայորը ստանում է նոր խոշոր մրցանակ

Վիկտոր Համբարձումյանի առաջին մրցանակակիր շվեյցարացի հանրահայտ աստղաֆիզիկոս **Միշել Մայորը** եւ նրա գործընկեր **Դիդյե Քելոսն** արժանացել են հիմնարար գիտությունների անվանակարգում իսպանական BBVA հիմնադրամի «Գիտելիքի սահմանագծի» մրցանակին (BBVA Foundation Frontiers of Knowledge Award in Basic Sciences), որը կազմում է 500 հազար եվրո: Ինչպես հայտնի է, նրանք են 1995թ. հայտնաբերել առաջին արտարեգակնային մոլորակը (Պեգասի 51 աստղի շուրջը), եւ այժմ մրցանակը տրվել է Արեգակնային համակարգից դուրս մոլորակների առաջին դիտումները հնարավոր դարձրած նոր աստղագիտական սարքավորումների եւ փորձարարական տեխնիկայի մշակման համար: Այդ հայտնագործությունը հեղաշրջում էր աստղագիտության մեջ: Այն ժամանակ քիչ թվով աստղագետներ էին հավատում արտարեգակնային մոլորակների հայտնաբերման հնարավորությանը, բայց Մայորն ու Քելոսը մշակեցին եւ զարգացրին Դոպլերի էֆեկտի վրա հիմնված տեսագծային արագությունների եղանակը, որի շնորհիվ գրանցվում են մոլորակի ազդեցության տակ աստղի չնչին շարժումները: Այսօր արդեն հայտնաբերվել է մոտ 600 արտարեգակնային մոլորակ, եւ արդեն իրականացվել են նրանցից ոմանց մթնոլորտների ուղղակի չափումներ: Հիշեցնենք, որ BBVA հիմնադրամի մրցանակների հիմնարար գիտությունների բնագավառն ընդգրկում է ֆիզիկան, քիմիան եւ մաթեմատիկան, իսկ ընդհանրապես այդ հիմնադրամն ունի «Գիտելիքի սահմանագծի» 8 մրցանակ՝ հիմնարար գիտություններ, կենսաբժշկություն, բնապահպանություն եւ պահպանության կենսաբանություն, տեղեկատվական եւ հաղորդակցության տեխնոլոգիաներ, տնտեսագիտություն, ֆինանսներ եւ կառավարում, ժամանակակից երաժշտություն, կլիմայի փոփոխություն եւ զարգացման համագործակցություն: Նախկինում Միշել Մայորն արժանացել է նաեւ Ալբերտ Այնշտայնի մեդալի (2004), Ֆրանսիայի Պատվո լեգեոնի ասպետի տիտղոսի (2004), աստղագիտության ոլորտում Շոուի մրցանակի (2005) եւ Հայաստանի Հանրապետության Վիկտոր Համբարձումյանի միջազգային մրցանակի (2010):

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

# Աշխարհում նշվեց Հոլոքոստի զոհերի հիշատակի օրը

**1945-ի հունվարի 27-ին խորհրդային զորքերն ազատագրեցին Օսվենցիմի (Աուշվից-Բիրկենաու) համակենտրոնացման ճամբարի կալանավորներին: ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի որոշմամբ 2005-ից ողջ աշխարհում հունվարի 27-ը նշվում է որպես Հոլոքոստի զոհերի հիշատակի օր: ՄԱԿ-ի ընդունած թիվ 60/7 բանաձեւը դատապարտում է Հոլոքոստի ժխտումը եւ բոլոր երկրներին կոչ է անում հարգել Մեծ աղետի զոհերի հիշատակը:**

**Հունվարի վերջին շաբաթներին աշխարհի շատ երկրներում անցկացվում են Հոլոքոստի զոհերի հիշատակին նվիրված սգո արարողություններ: Հատուկ արարողություններ են անցկացվում Օսվենցիմի հուշահամալիրի տարածքում: Այս տարի Լեհաստանում սգո արարողություն է անցկացվել նաեւ Տերբլինկայի նախկին համակենտրոնացման ճամբարի տարածքում, հաղորդում է newsru.go.il կայքէջը: Հունվարի 27-ին ՄԱԿ-ի շենքում անցկացվել է Հոլոքոստի մանուկ զոհերի հիշատակին նվիրված հատուկ արարողություն:**

# «Ռուսաստան. ազգային հարց»

## *Կլոր սեղան ՌՀՄ-ում՝ նվիրված Վ. Պուտինի համանուն հոդվածի քննարկմանը*

Վլադիմիր Պուտինի «Ռուսաստան. ազգային հարց» հոդվածը բարձրագույն պաշտոնատար անձի՝ նախագահության թեկնածուի փաստորեն առաջին ծրագրային ելույթն է նոր Ռուսաստանի ամբողջ 20-ամյա պատմության մեջ: Վլադիմիր Պուտինը գնահատական է տալիս արդի աշխարհում միջէթնիկական եւ միջդավանանքային լարվածության աճի պատճառներին ու հետեւանքներին եւ նշում Ռուսաստանի ազգային քաղաքականության հեռանկարները: Ենթադրվում է, որ հոդվածը կդրվի Ռուսաստանի նախագահի թեկնածու Վլադիմիր Պուտինի նախընտրական ծրագրի հիմքում:



Հունվարի 23-ին «Նեզավիսիմայա գազետայում» հրապարակված հոդվածը լայն արձագանք է գտել հասարակության մեջ, անշուշտ՝ նաեւ ազգային համայնքներում եւ առիթ է դարձել Ռուսաստանի հայերի միությունում դրա քննարկման համար:

ՌՀՄ կենտրոնական գրասենյակում հավաքվել էին ՌԴ բոլոր ազգային համայնքների ու մշակութային միավորումների եւ մի շարք երիտասարդական կազմակերպությունների աննախադեպ թվով ղեկավարներ, ազգամիջյան հարաբերությունների փորձագետներ:

Տես էջ 3

# Քլինթոնի «համբույրը» Թուրքիային

«Մեր ամենամեծ հզորությունը խոսքը չքրեականացնելու մեջ է», հունվարի 26-ին Միացյալ Նահանգների արտաքին գործերի նախարարությունում դիվանագիտության զարգացման վերաբերյալ չորս տարին մեկ անցկացվող հանդիպմանը հայտարարել է ԱՄՆ պետքարտուղար **Հիլարի Քլինթոնը**:

Ինչպես տեղեկացնում է «Ամերիկայի ձայնը», Քլինթոնն այդպես է արձագանքել աշխատողներից մեկի հարցին, թե ինչո՞ւ Միացյալ Նահանգները չի ընդունել Հայոց ցեղասպանությունը, եւ արդյո՞ք դրա պատճառն է Միացյալ Նահանգներում ցեղասպանության հասկացության ընդունված սահմանումը, թե՞ Թուրքիայի հետ ունեցած հարաբերությունները, թե ինչպիսի դիրքորոշում ունի Միացյալ Նահանգները Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի առնչությամբ:

«Մարդիկ կարող են ասել գրեթե այն ամենը, ինչ ցանկանում են, եւ մեր երկրում դա իրականում այդպես է», շարունակել է Քլինթոնը՝ հավելելով. «Ինչ վերաբերում է այլ պետություններին, ներառյալ Ֆրանսիայի նման մեր մոտ բարեկամ եւ դաշնակցին, ապա այդ պետություններում գործում են այլ ստանդարտներ, այս երկրներն ունեն այլ պատմություն, սակայն հուսով եմ, որ մենք երբեք չենք ընտրելու խոսքը քրեականացնելու ուղին»:

«Իմ կարծիքով, Միացյալ Նահանգների կառավարությունը ճիշտ դիրք է զբաղեցնում այս հարցում, քանի որ, անկախ այն բանից, թե որքան զարհուրելի կարող են լինել իրադարձությունը եւ դրա հետեւանքով առաջացող հույզերը, կարծում եմ՝ պատմական խնդիրները լուծելու համար կառավարության տրված իշխանության օգտագործումը բացում է մի դուռ, որով անցնելը շատ վտանգավոր է», ասել է Քլինթոնը:

ԱՄՆ պետքարտուղարի ներկայացմամբ, նման խնդիրների քննարկման համար հարթակ են գիտական շրջանները ու հաղորդակցության բաց տարբերակները, որոնց շրջանակներում էլ, ըստ Քլինթոնի հույսի, կարգավորվելու են նշված խնդիրները:

«Վերջ ի վերջո, մարդիկ գալիս են եզրակացությունների, որոնք հարգանքի են արժանի, սակայն մենք պետք է խրախուսենք, որ պատմական իրադարձությունների շուրջը վարվող քննարկման որեւէ կողմում գտնվող յուրաքանչյուր ոք մուտք գործի գաղափարների շուկա: Հավաքենք ապացույցներ, առաջադրենք փաստարկներ եւ պատրաստ եղենք քննարկմանը մասնակցելու՝ սա հենց այն է, ինչ, կարծում եմ, պետք է տեղի ունենա նաեւ այս հարցի շուրջը», եզրափակել է Քլինթոնը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Պատմության քաղաքական շահարկումն անընդունելի է»

*ԵԽԽՎ-ն կոչ է անում «քննել սեփական անցյալը եւ իրազեկել բնակչությանը», այն, ինչ պակասում է Թուրքիային*

Կովկասյան տարածաշրջանում վերջին շրջանի կամ դեռեւս ընթացող հակամարտությունները հանգեցրել են բնակչության տեղափոխությունների: ԵԽԽՎ Ստրասբուրգյան երեկվա նստաշրջանում քննարկվող առաջին հարցին առնչվող զեկույցն այսպիսի նախադասություն է պարունակում, ընդ որում, բացառությամբ, թե հակամարտություններ, ինչպիսին էր պատերազմը Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ, կամ հակամարտությունը «Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ»՝ ըստ ԵԽԽՎ 2007թ. Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի տարածաշրջաններում հակամարտությունների ժամանակ Հայաստանում, Ադրբեջանում եւ Վրաստանում անհետ կորած մարդկանց մասին բանաձեւի:



«Բնակչության բռնի տեղահանումը որպես մարդու իրավունքների խախտում» զեկույցը ներկայացնում էր Իրավական եւ մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովը՝ ի դեմս զեկուցող **Եգիդիժուս Վարեաիկիսի**:

Զեկույցը խստորեն դատապարտում է մարդկանց բռնի տեղահանումը՝ Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին կոչ է անում դատապարտել նման գործողությունները, «պատշաճորեն քննել սեփական անցյալը բռնի տեղահանությունների առնչությամբ, խրախուսել միջազգային իրավական առումով պարտավորեցնող գործիք, որ կընդհանրացնի միջազգային իրավունքի տարբեր ստանդարտներն ու կսահմանի բռնի տեղահանության բոլոր ձեւերը»:

Զեկույցի առնչությամբ իր ելույթում Հայաստանի պատվիրակության անդամ **Հերմինե Նաղդալյանը** շեշտեց, որ զեկուցողի բանավոր խոսքի որոշ գնահատականներ պետք է նշվեին նաեւ գրավոր տեքստում, օրինակ՝ այն առնչությամբ, որ երբեմն տեղահանությունները վերածվում են առավել ծանր, ողբերգական հետեւանքների՝ մարդկանց ոչնչացման ու ցեղասպանության: «Քննարկվող զեկույցով վեհաժողովը դատապարտում է հարկադիր տեղահանման բոլոր ձեւերն ու առաջարկում ԵԽ անդամ երկրներին դատապարտել այն, առաջարկում է ուսումնասիրել սեփական պատմությունն ու աջակցել գիտելիքների տարածմանը», նշեց Նաղդալյանը:

Նրա խոսքով, նշվածը լավ է, բայց պետք է ոչ միայն նպաստել բնակչության շրջանում գիտելիքների տարածմանը, այլեւ տալ իրավական ու քաղաքական գնահատականներ, թույլ չտալ ժխտումը: «Այդ դեպքում երաշխիք կլինի, որ մարդկության տառապանքների ուղին չի կրկնվի», հավելեց Նաղդալյանը, նաեւ շեշտելով, որ պետք է բացառել կրկնակի ստանդարտների կիրառումը՝ սեփական կամ ուրիշի պատմությունն ուսումնասիրելիս, օրինակ, այնպիսի մի պարագայում, երբ 20-րդ դարասկզբի հայերի ողբերգության առնչությամբ հենց թուրքական դատարանն է պատժել հանցագործներին:

«Անթույլատրելի է, որ կշեռքի մի նժարին մարդկանց տառապանքներն ու արյունն է, մյուս կողմին լինեն մանր, առեւտրային փաստարկներ կամ քաղաքական նպատակահարմարություն: Չի կարելի ընդունել Հոլոքոստը կամ հայերի ոչնչացումը, դրա հիմքում դնելով ինչ-որ մեկի քաղաքական շահը», նշեց Հայաստանի պատվիրակը, ավելացնելով, որ նույն կերպ անթույլատրելի է, որ որեւէ ազգի ներկայացուցիչ երբեւէ հայտարարի, թե «իրենց նավթն ավելի թանկ դուրս եկավ, քան այլոց արյունը»:

Զեկույցի առնչությամբ ելույթ ունեցող ադրբեջանցի Գարինա Փաշաեւան անգիր արած «փախստականներ Ղարաբաղից եւ Հայաստանից» էր ներկայացնում, հույն կիպրացիները խոսում էին հույն եւ թուրք բնակչության խնդիրներից, թուրքերը՝ շեշտում թուրք կիպրացիների արհամարհված լինելու իրենց թեզը:

Զեկույցում կետ 3-ով ներկայացվող 19-24 դրույթները ներկայացնում են տարբեր ժամանակահատվածներում տեղի ունեցած բռնի տեղահանությունների մասին՝ նշելով 20-րդ դարում հայերի, ասորիների եւ հույների տեղահանությունների ու կոտորածների մասին Օսմանյան կայսրությունում մինչեւ 1945-48թթ. Գերմանացիների արտաքսումը Սիլեզիայից եւ այլ տարածաշրջաններից: 1990-ականներից օրինակ են բերվում նախկին Հարավսլավիայի իրավիճակի, Սուդանն ու Դարֆուրի խնդիրները, իսկ կովկասյան տարածաշրջանի մասին ձեւակերպմանն արդեն անդրադարձել ենք:

Զեկույցի հենց այս հատվածը տեղիք էր տվել, որ որոշ պատվիրակությունների, մասնավորապես թուրքական եւ ադրբեջանական, ներկայացուցիչներ հանդես գային շատ նեղմիտ փոփոխությունների առաջարկներով: Դրանց մի մասին դեմ արտահայտվեց նաեւ հայաստանյան մեկ այլ պատվիրակ՝ **Արմեն Ռուստամյանը**:

«**Ազգին**» ներկայացրած պարզաբանմամբ, փոփոխության առաջարկներից մեկը վերաբերում էր տեղահանությունների օրինակներում Լեռնային Ղարաբաղն առանձին նշելուն, թեեւ այլ առաջարկով էլ տարբերակ էր դիտվում հանել ընդհանրապես թվարկումը, քանի որ այն ամբողջական չէ: «Եթե ամբողջական չէ ու ամբողջացնելու համար փորձում են միայն Ղարաբաղն ավելացնել, դա որեւէ տրամաբանության մեջ չի տեղավորվում», ասաց Ռուստամյանն, ավելացնելով, որ զեկույցում առկա է կովկասյան տարածաշրջան եւ ԼՂՀ առանձնացնելը տրամաբանական չէ:

Առաջարկվող մեկ այլ փոփոխություն էլ, կարելի է ասել, ներկայացնում էր զուտ թուրքական տեսակետ Հայոց ցեղասպանության առնչությամբ՝ առաջարկելով բանաձեւը չկիրառել, երբ բռնի տեղահանությունների ենթարկված անձինք «վտանգել են տվյալ երկրի անվտանգությունը, կամ եղել են դավաճանության դրսեւորումներ» եւ այլն, այսինքն փորձ՝ բանաձեւ խցկելու Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական «փաստարկները»: «Սրանք բոլորը ցեղասպանության արդարացումներ են, եւ ես ասացի, որ սա չի կարելի ընդունել, քանի որ կնշանակի թույլ տալ արդարացնել բռնի տեղահանման փաստերը», պարզաբանեց Ռուստամյանը:

Մեկ այլ անհեթեթ առաջարկով էլ փորձ էր արվում փաստաթղթում ընդգրկել դրույթ, թե բերված եզրակացությունները կունենան ուժ, եթե հաստատվեն պատմաբանների կողմից: Ռուստամյանը քննարկմանը նշեց, որ այսպիսի կետի ընդունումն ուղղակի անիմաստ կդարձնի զեկույցը:

Արդյունքում բանաձեւի նախագծի 8 կետերին ավելացավ եւս մեկը, որ տարբեր մեկնաբանությունների տեղիք կարող է տալ. «Բռնի տեղահանությունների կամ դրանց հետեւանքների առնչությամբ երկու երկրների միջեւ հակամարտության դեպքում երկու կողմերն էլ պետք է բացեն իրենց արխիվները եւ ձեւավորեն երկու երկրների գիտնականներից ու պատմության մասնագետներից բաղկացած հանձնաժողով», ընդ որում, մասնագետներին հնարավորություն կտրվի օգտվել երրորդ կողմ երկրների արխիվներից, եթե նման անհրաժեշտություն լինի: «Այս հարցը կքննարկվի գիտականորեն, հնարավոր օբյեկտիվ ճանապարհով պետք է կոնսենսուս լինի պատմաբանների կողմից, այլ ոչ քաղաքական գործիչների», նշվում է բանաձեւում եզրափակմամբ. «Պատմության քաղաքական շահարկումը որեւէ պարագայում անընդունելի է»:

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Ստրասբուրգ**

ՌՈՒՍԹԱՎԻ

## Շնորհավորանք 20-ամյա բանակին ու 5-ամյա որդուն՝ բանտից

**«Հավատացած եմ, որ նորօրյա պատմության հունվարի 28-ը մեր պետության, Հայկական լեռնաշխարհի, աշխարհասփյուռ հայության ապագա հազարաբյուր տարիների ստեղծարար ու խաղաղ գոյապահպանման գրավականն է», Վրաստանի Ռուսթավի քաղաքի թիվ 6 խիստ ռեժիմի գաղութից իր շնորհավորանքն է փոխանցել ջավախահայ քաղաքական ակտիվիստ, քաղբանտարկյալ Վահագն Չախալյանը:**

**Ինչպես, ըստ նրա խնդրանքի, տարածել է «Երկիր» միությունը, Հայոց բանակի օրը՝ հունվարի 28-ին է ծնվել նաեւ Չախալյանի որդին, որն այս տարի կդառնա 5 տարեկան: «Շնորհավորում եմ իմ որդի Ռուբեն Չախալյանի հնգամյա ու Հայկական բանակի 20-ամյա հոբելյանները», գրել է Չախալյանը:**

**Հիշեցնենք, որ 2008-ի հուլիսից ձերբակալված, իսկ 2009-ի ապրիլից 10 տարվա ազատազրկման դատապարտված Չախալյանի գործը, որին «Ազգի» ընթերցողները ծանոթ են մեր պարբերական հրապարակումներից, հնչեղություն է ստացել մի շարք հայկական եւ սփյուռքյան ոչ կառավարական կազմակերպությունների հայտարարություններով:**

**Վահագն Չախալյանը վրաց իշխանությունների դեմ բողոք է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Բողոքի քննությունը ներկայումս ընթացքի մեջ է:**

**Ա. Հ.**

## Նոր նշանակումներ

**Հունվարի 26-ին Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են նշանակումներ Հայաստանյայց առաքելական եկեղեցու թեմերում եւ Մայր աթոռ Ս. Էջմիածնի կառույցներում:**

**Մայր աթոռի միաբան Շնորհք աբեղա Սարգսյանը ծառայության է կոչվել Արագածոտնի թեմում: Հովհաննես քահանա Մարուքյանը, ավարտելով ծառայությունը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմում, նշանակվել է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Վանաձորի հայորդյաց տան հոգեւոր հովիվ: Զոհրապ քահանա Մազմանյանը, ավարտելով ծառայությունը ՀՀ զինված ուժերում, իր հոգեւոր սպասավորությունը կշարունակի Վիրահայոց թեմում:**

## Շնորհավորանք

«Գերագույն խորհուրդ» նախկին պատգամավորների ակումբի նախագահությունը ողջ հայ ժողովրդին շնորհավորում է հայոց նորօրյա բանակի ստեղծման 20-ամյակը եւ մաղթում ամուր պաշտպանված խաղաղություն մեր երկրին:

## 150-րդ դպրոցում պատվո ցերեկույթ էր

Ամբողջ հանրապետությունում տոն է՝ Հայկական բանակը 20 տարեկան է: Հանրապետության տարբեր համայնքների ու մարզերի կրթական հաստատությունները եւս անմասն չեն մնում եւ կազմակերպում են գեղեցիկ ցերեկույթներ՝ մեծարելով պատերազմում կռված եւ իրենց արյան գնով հայրենիքը պաշտպանած զինվորներին:

Այս տոնը մեծ շուքով նշվեց նաեւ Նոր Նորք համայնքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան թիվ 150 դպրոցում: Ուսուցիչներն ու աշակերտները ջանք ու եռանդ չէին խնայել եւ ցնցեցին հանդիսատեսին իրենց շնորհքով ու հայրենասիրությամբ: Աննման ցերեկույթի վերջում դպրոցի տնօրեն **Մանիկ Հայրապետյանը** «Ֆրիտյոֆ Նանսեն» հուշամեդալով պատվեց հանդեսի կազմակերպիչ եւ պատմության ուսուցչուհի Մելանյա Մախյանին: Իսկ Նոր Նորք համայնքի թաղապետ Մելիք Գասպարյանի կողմից պատվոգրի արժանացավ հենց ինքը՝ դպրոցի տնօրենը, որի դպրոցը հայտնի է իր յուրօրինակ միջոցառումներով: Ցերեկույթին ներկա զինվորականները նվերներ ստացան դպրոցի տնօրենության կողմից եւ բարձր տրամադրությամբ ու գոհունակությամբ հեռացան: Հաճելի է, երբ պատվում ենք պատերազմի հերոսներին: Կրկնակի հաճելի՝ երբ մեծարման խոսքեր ես լսում մանուկների շուրթերից:

**ԱՐՍԵՆ ՇԻՐՎԱՆՅԱՆ**

## 22-ամյա երիտասարդը մահացավ անհասկանալի իրավիճակում

**«Ազգը» ՀՀ ոստիկանության լրատվության վարչությունից ճշտեց, որ հունվարի 27-ին, ժամը 00.15-ին 22-ամյա Նարեկ Զ., Երեւան-Սեւան ճանապարհի 3-րդ կմ-ին, ընթացքի ժամանակ, վայր է ընկել Ալվինա Հ.-ի վարած «Համեր H-2» մակնիշի ավտոմեքենայի ոտնակի վրայից: Անհասկանալի է, թե ընթացքի ժամանակ երիտասարդը ինչո՞ւ եւ ինչպե՞ս է հայտնվել ավտոմեքենայի ոտնակին:**

**Պարզից էլ պարզ է, որ ոտնակից վայր կընկնեն, ինչն էլ տեղի է ունեցել: Վնասվածքներով նման իրավիճակում հայտնված երիտասարդին տեղափոխել են հիվանդանոց, որտեղ գիտակցության չգալով մահացել է:**

**Ոստիկանության Կոտայքի քննչական բաժանմունքում դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քր. օր.-ի 242 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով: Նախաքննությունը կպարզի, թե երիտասարդը ինչո՞ւ էր հայտնվել ավտոմեքենայի ոտնակին, այն էլ ընթացքի ժամանակ՝ մայրուղում:**

**Մ. Մ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հրացանակիրները քսան տարի անց

Այսօր հայկական բանակը դարձավ քսան տարեկան, եւ մենք ամենեւին էլ չենք խոսելու հայրենասիրությունից, քանի որ իսկական ընկերները իսկական ընկերոջը ու թեկուզ հայրենասիրությունից դրդված, նրա թերություններն են ասում, դրանք շտկված տեսնելու հույսով:

Հունվարի 26-ին ԱԺ ներքին գործերի, պաշտպանության եւ ազգային անվտանգության մշտական հանձնաժողովի նախագահ **Հրայր Կարապետյանը** հանդիպում էր լրագրողների հետ ու ընդգծում. «Մեր բանակը Հայաստանի ամենակայացած պետական կառույցն է»: Գրեթե նույն ժամերին, հինգշաբթի օրը կառավարության շենքի առջեւ ցույցի էին դուրս եկել խաղաղ պայմաններում բանակում զոհված տղաների ծնողները, որոնք իրենց դժգոհությունները հայտնելով նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանին, պահանջում էին իրենց որդիների մահվան կամ սպանության դեպքերի բացահայտում:

Ուրեմն «ո՞վ է» մեր 20-ամյա բանակը. նա, որը ամենակայացածն է՝ բոլորի մեջ, նա, որին մենք ամենաշատն ենք պարտական, որ կառուցում ենք, գրում ենք, նկարում ենք, ու երգում, թե՞ նա, որը սպանում է մեր եղբայրորդիներին, ու քողարկում այդ ամենը: Երկուսն էլ:

Ներկայացնելով ԱԺ-ում բանակաշինության վերաբերյալ օրենսդրությունը՝ Հրայր Կարապետյանը նշել է. «Այսօր բանակում շատ օրենքներ չեն գործում, որովհետեւ դրանք ուղղակի չկան: Բանակն առաջնորդվում է հրամաններով, հրամանատարների կարգադրություններով ու ԽՍՀՄ-ից եկած, հաճախ անցանկալի ավանդույթներով»: Սա ամեն հինգշաբթի կառավարության դիմաց հավաքվող ծնողների բողոքի պատճառը չէ՞... Բանակում իրոք որոշ օրենքներ չեն գործում, ավելին՝ մի շարք զորամասերում «գործող օրենքները» արմատապես տարբերվում են՝ մեկ այլ զորամասի «գործող օրենքներից», ու մեր ծնողները հենց այս պատճառով չե՞ն արդյոք հատուկ հասցե ընտրում իրենց որդուն՝ բանակ ճանապարհելիս: Ինչո՞ւ բանակն այսօր տարբեր է, ինչո՞ւ Իջեւանից վերադարձած երիտասարդը ուրիշ բան է պատմում, Կապանից վերադարձածը՝ բոլորովին այլ, ինչո՞ւ Մեղրիում ծառայող մեր եղբորը արձակուրդ չեն տալիս, իսկ Նուբարաշենում ծառայող էլի մեր եղբայրը «ամեն օր տանն է»... Որովհետեւ հենց այսպիսին ենք մենք՝ տարբեր: Ոչ թե, որովհետեւ մեկս մյուսից ուղղակի տարբերվում ենք, այլ որովհետեւ՝ մենք ամենքս մեր ուզածն ունենք, ու այդ ուզածին հասնելու մեր ճանապարհները, որոնք հաճախ, իսկ բանակի պարագայում՝ ցավոք, հաճախ, միմյանց հակասում են:

Իսկ ինչպե՞ս ենք մեր որդիներին, ընկերներին բանակ ճանապարհում. «Գնա, հենց վաղը հետեւից գալու եմ՝ ամեն ինչ դասավորեմ», ասում է հայրը որդուն զինկոմիսարիատի դիմաց: Մեկ ուրիշ հայր իր որդուն ասում է. «Հենց խնդիր լինի, ինձ զանգի, գամ բոլոր հարցերը լուծեմ, արձակուրդ էլ հենց ուզես՝ զանգի»: «Ապեր, ամենակարեւորը քո դրվածքը դիր, ընենց արա՝ բոլորը քո ասածով շարժվեն, ու ոչ մեկի ասածը մի արա, մանավանդ՝ սպաների», ասում են ընկերները բանակ գնացող ընկերոջը... Շարունակե՞նք, թե՞ այսօրվա մեր բանակում կատարվող հանցագործությունների մեծամասնության հիմքերը ստացանք արդեն: Լավ, իսկ սպանե՞րը, մի՞թե նրանք պարտավոր չեն վերահսկել իրադրությունը, կառավարել խոսքով, հոգեբանորեն: Իհարկե պարտավոր են, բայց դպրոցական աշակերտին էլ մանկավարժն է պարտավոր ինչ-որ չափով վերահսկել, կառավարել խոսքով, հոգեբանորեն: Անո՞ւմ են՝ հիմնականում ոչ, իսկ չէ՞ որ հենց այս աշակերտներն էլ դառնում են սպաներ նաեւ: Վերջիններիս համար այսօր կան մի քանի ռազմական ուսումնական հաստատություններ: Ի՞նչ են նրանք այնտեղ սովորում ու առհասարակ՝ ի՞նչ են սովորում բանակում: Օրինակ՝ մեր զորամասում կար սպա՝ զորամասի ֆիզիկական պատրաստվածության ծառայության ղեկավարը: Մի օր նա մի քանի հոգու ուսումնական պարապմունքների ժամին տարավ իր անձնական հողամաս, ու մենք այդ ամբողջ օրը նրա համար կարտոֆիլ հավաքեցինք: Ճիշտ է, նա մեզ առատորեն հյուրասիրեց, ու առհասարակ նա հիանալի մարդ էր, բայց արդյո՞ք միայն հիանալի մարդ լինելը բավարար է հիանալի սպա լինելու համար... ու ամենակարեւորը, արդյո՞ք մենք բանակ ենք գնում, որպեսզի մարտավարության պարապմունքը բաց թողնենք, որպեսզի սպաներից մեկի հողամասում կարտոֆիլ հավաքենք:

Սա է մեր այսօրվա բանակը, բայց նաեւ ՀԱՊԿ-ում ու ՆԱՏՕ-ի առանձին զորավարժություններում ամենաբարձր գնահատականների արժանացածն է մեր այսօրվա բանակը: Բազմաթիվ միջազգային հեղինակավոր կենտրոնների ու փորձագետների կողմից տարածաշրջանում ամենամարտունակը ճանաչվածն է մեր այսօրվա բանակը, երեկվա հրացանակիրներն այսօր անօդաչու ինքնաթիռ են արտադրում, եւ ամենակարեւորը՝ մեր խաղաղ արեւածագը պաշտպանողն է մեր այսօրվա բանակը: Պարզապես շատ տարբեր է, իրար հակասող տարբեր, մի ընդհանուր խոսքով՝ հայ մարդն է հայկական բանակը, ուրեմն շնորհավո՛ր տոնդ, հա՛յ մարդ, ու դու առաջինը դարձի՛ր այնպիսին, ինչպիսին ուզում ես տեսնել այն, ինչը ստեղծել ես:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

**ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՌՀՄ-ՈՒՄ**

# «Ռուսաստան. ազգային հարց»

*1-ին էջից*

**Ռուսաստանի ազգային համայնքների ներկայացուցիչները հանդես եկան ազգային քաղաքականության հարցերով զբաղվող պետկառույցի ստեղծման օգտին եւ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին ու ներգաղթյալներին առաջարկեցին իշխանության հետ շփվել ընդհանուր ազգամիջյան կազմակերպության միջոցով:**

**Վեց կլիներ նախարարության կամ ուրիշ իշխանական կառույցի փոխարեն ստեղծել ՌԴ նախագահին առընթեր Ազգությունների խորհուրդ:**

ՌՀՄ նախագահ Արա Աբրահամյանը հայտնեց, որ Պուտինի հոդվածի քննարկումը տեղի կունենա Ռուսաստանի 83 քաղաքների կլոր սեղաններում, որոնց կմասնակցեն համայնքների եւ ազգային ինքնավարությունների ներկայացուցիչներ: Նրանց առաջարկությունները այսօրվա կլոր սեղանի մասնակիցների առաջարկությունների հետ կամփոփվեն եւ կուղարկվեն վարչապետին:



ՌՀՄ նախագահ **Արա Աբրահամյանը**, ներկաներին դիմելով, ընդգծեց. «Մենք պետք է ինքներս մասնակցենք ազգային հարցում քաղաքականության ձեւավորմանը, նման քաղաքականության մեխանիզմների մշակմանը»:

Ռուսաստանի վրացիների միության փոխնախագահ **Նուգզար Ձիմշիլեյշվիլին** առաջարկեց ստեղծել «Ազգային խորհուրդ, որտեղ կընդգրկվեն տարբեր համայնքներից հեղինակավոր մարդիկ»: Այդ առաջարկությունը պաշտպանեց նաեւ Ռուսաստանի ներգաղթյալների դաշնության նախագահ **Մաջումդեր Ամինը**:

Կովկասի ժողովուրդների ռուսաստանյան կոնգրեսի երիտասարդական թեւի ղեկավար **Սուլթան Տոգոնիձեն** գտնում է, որ Ռուսաստանում օգտակար կլիներ Ղազախստանի ժողովուրդների ասամբլեայի նման մի մարմին: Այդ կազմակերպության ղեկավարը հանրապետության նախագահ Նուրսուլթան Նազարբաեւն է:

Իսկ Ռուսաստանի ադրբեջանցիների ղեկավար **Սոյուն Սադիկովը** գտնում է, որ ավելի արդյունավետ կլիներ նախարարության կամ ուրիշ իշխանական կառույցի փոխարեն ստեղծել ՌԴ նախագահին առընթեր Ազգությունների խորհուրդ:

Կլոր սեղանի մասնակիցների կարծիքով՝ Պուտինի հոդվածում «օբյեկտիվորեն մատնանշվում են արտաքին եւ ներքին գաղթի խնդիրները, էթնիկական ծայրահեղականության պատճառները, արդարացիորեն առանձնացվում է ռուս ժողովրդի պետականաստեղծ դերը բուն Ռուսաստանի գոյության փաստի առնչությամբ»:

«Կլոր սեղանի» արդյունքների հիման վրա ձեւակերպվեց ընդհանուր կարծիք, ըստ որի Պուտինն իր հոդվածում խոսում է «ոչ միայն խնդիրների, այլեւ դրանց լուծման ուղիների մասին»:

Միջոցառման մասնակիցները «ընդհանուր առմամբ հավանություն տվեցին հոդվածում շարադրված առաջարկություններին եւ պատրաստակամություն հայտնեցին պաշտպանելու երկրի ղեկավարության ջանքերը՝ ուղղված Ռուսաստանի ժողովրդի միասնության ամրապնդմանը»:

# Ազգային բանակի 20-րդ տարեդարձը՝ մտորելու առիթ

*1-ին էջից*

Նա զարմանում է անցած տարի բանակի դեմ հասարակական պոռթկումից, քանի որ նրա կարծիքով բանակում առկա ոչ կանոնադրային միջադեպերի վատ վիճակագրությունը նվազում է տարեցտարի. «Արձագանքը երբեմն չափազանցված է, քանի որ Հայաստանում կան ուժեր, որոնք առաջնորդվում են «որքան վատ, այնքան լավ» սկզբունքով», մտորում է նա: Իհարկե, հայոց բանակն աշխարհի այլ բանակների նման թերություններ ունի՝ մեր դեպքում հասարակության մեջ առկա թերությունների ողջ փունջն է արտացոլվում նաեւ բանակում, ու մենք կողմնակից ենք այդ թերությունների մասին խոսելուն եւ ոչ թե կոծկելուն: Ու չենք հասկանում նրանց, որ թերությունների մասին մտահոգ խոսողին կարող են հավասարեցնել «հավայի բերան թրջողի» հետ: Եվ լավ է , որ այդ ըմբռնումը տեղ է գտնում նաեւ բանակի հարցերով զբաղվող պաշտոնատարների (չնայած՝ ոչ բոլորի) մեջ. «Չպետք է կոծկել տեղի ունեցող դեպքերը, որպեսզի սպաները եւ զինվորները զգոն լինեն, ծնողներին պետք է արդար եզրակացություն ներկայացնել», սա գոնե Ազգային ժողովի պաշտպանության ՆԳ եւ ԱԱ հարցերի հանձնաժողովի նախագահ Հրայր Կարապետյանն է ասում: Եվ բանակի ղեկավարությունն էլ աստիճանաբար հասկանում է՝ այլ ճանապարհ չկա, քան արդար պատիժը «հաբռգածներին»: Հուսով ենք՝ այդպես է, համենայն դեպս՝ պաշտպանության նախարարի վերջին շրջանի պահվածքը դրա վկայությունն է: Եվ երեւի կգա մի օր, որ Արտակ Նազարյանի նման կիրթ սպան ոչ թե կարկատան կլինի ու բանակում առկա վատ բարքերին խանգարող, այլ հակառակը, վատ բարքերի կրողները մեր բանակում ճչացող կարկատան կլինեն ու չեն հանդուրժվի՝ կհեռացվեն: Իսկ այսօր այն օրն է, որ մենք հպարտ պիտի լինենք ազգային բանակ ունենալու հանգամանքով, շնորհավորենք միմյանց, հայ զինվորի բազկին ուժ եւ ամրություն, մտքին՝ գաղափար ու նվիրում մաղթենք, ուրախանանք մեր հասարակ զինվորով, խրախուսենք բանակում զինվոր ունեցող մորը: Ու վարակվենք այն անկեղծ հրճվանքով, որով վարակվում է իմ երեքամյա թոռնիկ Նարեկը, երբ հանկարծ ականջին է ընկնում «Մեր անունն է հայկական բանակ» երգի ակորդը: Ցանկանանք, որ մեր զինվորական պատասխանատուները տարբեր առիթներով ասելու բան ունենան, ինչպես պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը՝ երբ նախորդ օրը մեր ռազմական գործի ձեռքբերումների մեջ զորքերի ավտոմատ կառավարման համակարգի, 1992-ից գրեթե զրոյից սկսված ու այսօր կայացած ռազմաարդյունաբերական համալիրի, մեր սպառազինության եւ ռազմական տեխնիկայի՝ սեփական ձեռնարկություններում նորոգվելու, Հայաստանում առաջին անգամ սինթեզված հրթիռային վառելանյութի եւ այլ ռազմական հպարտանալիքների մասին էր խոսում: Բայց եւ զգոնանանք՝ գուցե վերլուծելու բան կա ու նախարարի տառապանքը փորձ ուներ՝ այսպիսի ձեւակերպումների համար. «Չի կարելի բանակի մասին դատել ներքաղաքական զարգացումներով պայմանավորված նեղ շահերի, միջկուսակցական բախումների, եւ ի վերջո, տարբեր հանգամանքների զուգորդման արդյունքում տվյալ պահին ձեւավորված հասարակական տրամադրությունների լույսի ներքո: Դրանք անընդհատ փոխվում են, հարմարվում այսրոպեական իրողություններին, իսկ բանակը շարունակում է կատարել նույն գործառույթները...»:



ՖՈՏՈԼՈՒՐ

Բանակն, այո՛, որչափ հզոր, այնքան նուրբ ու զգայուն մարմին է (նախարարի խոսքից օգտվեցինք), բանակում տեղի ունեցող մահերը հոգեբանական խորը եւ բացասական ազդեցություն են թողնում հասարակության վրա, ու ո՛չ արդարացումները, ո՛չ զանազան խոստումները չեն կարող փոխել այդ ազդեցության թողած մտայնությունը, փոխելու ուղին մեկն է՝ բանակը պետք է ազատվի անհոգի, անկիրթ, զինվորին իր որդու նման չնայող սպաներից, մինչեւ այժմ պատահած մահերն ու միջադեպերը պետք է արդարացի գնահատական ստանան, պատժվեն բոլոր դերակատարները, ու ոչ թե մի երկու խեղճ, ուրիշի մեղքն իր վրա վերցնող զինվոր: Սա անընդհատ գործընթաց է՝ կամքի մշտական դրսեւորմամբ, բանակի հանդեպ վստահության ու հավատի բարձրացման շարունակական գործընթացով:

Իսկ այսօր հայոց բանակի տոնն է, ու տոնին հարիր էլ ցանկություններ ու մաղթանքներ ունենանք:

ՀՀ զինված ուժերի ստեղծման 20-ամյակի առիթով նախագահ Սարգսյանի հրամանագրերով զինված ուժերի մի բավական մեծ խումբ զինծառայողներ եւ ազատամարտիկներ պարգեւատրվել են շքանշաններով եւ մեդալներով, մի շարք զինվորականների շնորհվել կոչումներ: «Հարգելի՛ գեներալներ, սպաներ, զինվորներ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ստեղծման հոբելյանի առիթով ձեզ հանձնվող պարգեւների միջոցով մեր երկիրն ու ժողովուրդն իր վերաբերմունքն է արտահայտում ձեր անձնուրաց ծառայության հանդեպ: Այսօր դուք պարգեւատրվում եք ձեր հաջողությունների եւ ձեռքբերումների համար, որոնք Հայաստանը դարձնում են ավելի ամուր՝ բոլոր առումներով: Մենք հպա՛րտ ենք ձեզնով ու ձեր զինակից ընկերներով»,- ասել է Սերժ Սարգսյանը պարգեւատրման ժամանակ:

ԱԶԳ

## Տարաբնույթ

# Երբ բոլորը գիտեն, որ մեկը ստում է

Որքանո՞վ է հավանական, որ Թուրքիան ֆրանսիական Սենատի հայտնի որոշումից հետո նոր ընթացք տա հայ-թուրքական գործընթացին, այն է՝ վեր հանի հայ-թուրքական զույգ արձանագրությունները: Համաձայն տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի նախագահ **Ռիչարդ Կիրակոսյանի**՝ «բավական հավանական է», քանի որ այդպիսով Թուրքիան «կփորձի կասեցնել Հայոց ցեղասպանության ճանաչման ալիքը, ինչը կարող է առաջ գալ Սենատի որոշումից հետո»: Ստացվում է, փաստորեն, որ Թուրքիան հայ-թուրքական արձանագրությունները կարող է հիշել, որպեսզի թույլ չտա Ցեղասպանության ճանաչման ալիքի բացառում: Այս վերջինը բավական հավանական է: Օրինակ՝ նույն Կիրակոսյանը, հաջորդելով մի շարք եվրոպացի վերլուծաբանների, գտնում է, որ «Սենատի որոշմամբ ԵՄ-ի դռները Թուրքիայի առջեւ փակվեցին»:

Սրանից կարելի է անել մեկ հետեւություն, որ Ֆրանսիան Ցեղասպանության ժխտման համար քրեական պատիժ սահմանող օրինագիծն ընդունեց, որպեսզի բացառի Թուրքիայի մուտքը Եվրոմիություն: Հիշեցնենք, այս հարցում նախագահ Սարկոզիի կարծիքը հայտնի է ու բազմիցս բարձրաձայնված: Ու քանի որ Ֆրանսիան ԵՄ-ում, մեղմ ասած, «հասարակ երկիր» չէ, հավանականությունը մեծ է, որ Ցեղասպանության ճանաչման, դրա առնվազն բուռն քննարկման ալիք կբարձրանա, ասենք՝ Պորտուգալիայի, Իսպանիայի նման ԵՄ-ի երկրներում: Հիշյալ երկրների ու առհասարակ ողջ ԵՄ-ի տնտեսության գլխավոր «մատակարարը» հենց Ֆրանսիան է, Գերմանիայի հետ միասին, ու ռեալպոլիտիկի սկզբունքներով, կոնկրետ՝ պարտքերի մեջ խրված Պորտուգալիան կարող է անել այնպիսի մի բան, որը նրանից շատ է ցանկանում Փարիզը: Իսկ «ԵՄ-ն առանց Թուրքիայի» հենց այս՝ Փարիզի «շատ ցանկացած բաների» շարքից է, Ցեղասպանության ժխտման հարցում քրեական պատիժ սահմանելն էլ՝ այդ անդամակցությունը բացառող հիմնական գործիքներից մեկը: Հետեւաբար, մանավանդ «նախաապրիլյան» այս ժամանակահատվածում, մանավանդ տարբեր ազդեցիկ երկրներում նախընտրական այս տարում ու հաշվի առնելով բոլոր այդ ազդեցիկ երկրներում հայկական տարրի առկայությունը, Ցեղասպանության ճանաչման ալիքի բարձրացումը առաջին հերթին եվրոպական երկրներում բավականին հավանական իրադարձություն կարելի է որակել: Այս համապատկերում, եթե անգամ Թուրքիան Դավութօղլուի «անձնական դարակից» հանի հայ-թուրքական զույգ արձանագրությունները, իսկ դա Թուրքիան եթե անի, ապա կանի այս ալիքը բացառելու համար, որեւէ հաջողության չի կարող հասնել:

Վերադառնանք 2010-ի հոկտեմբերյան Ցյուրիխ, երբ շվեյցարական այս քաղաքում Հայաստան-Թուրքիա ԱԳ նախարարների մակարդակով կնքվեցին հայ-թուրքական արձանագրությունները: Այն սենյակում, որտեղ կնքվեցին այդ արձանագրությունները, բավական ուշագրավ կազմ էր հավաքվել, որտեղ բոլորը գիտեին, որ Դավութօղլուն գոնե Ցեղասպանության հարցում ստում է:

Ցյուրիխում, բացի Նալբանդյանից ու Դավութօղլուից, հատուկ այս նպատակով գտնվում էին նաեւ Ֆրանսիայի այն ժամանակվա ԱԳ նախարար Կուշները, ՌԴ ԱԳ նախարար Լավրովը, ԱՄՆ պետքարտուղար Քլինթոնը եւ հայ-թուրքական գործընթացի դե յուրե միջնորդ Շվեյցարիայի ԱԳ նախարար Միշլին Քալմի-Ռեյը: Արձանագրությունների տեքստում հայերիս ամենից շատ հուզող կետը «պատմաբանների հանձնաժողովի» վերաբերյալ դրույթն է, որը պետք է «քննարկի երկու պետությունների միջեւ եղած խնդիրները»:

Հիմա, «թողնենք Նալբանդյանն ու Դավութօղլուն ստորագրեն արձանագրությունները» ու հարցնենք ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովին՝ ի՞նչ եք կարծում, Ցեղասպանությունը եղելությո՞ւն է: Բնականաբար ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը իր երկրի անունից պետք է պատասխանի, իսկ իր երկիրը ոչ միայն ճանաչել ու դատապարտել է Ցեղասպանությունը, այլեւ դա արել է բավական ինքնատիպ ու ուշագրավ տեքստով. եթե Ցեղասպանությունը ճանաչած այլ երկրները Ցեղասպանության իրականացման տարածք որպես նշում են «օսմանյան Թուրքիան», ապա Ռուսաստանի ճանաչման փաստաթղթում «օսմանյան Թուրքիայի» փոխարեն նշված է՝ «Արեւմտյան Հայաստան»:

Այսինքն՝ Ցեղասպանությունը ՌԴ-ի համար, որի ԱԳ նախարարը ցյուրիխյան արձանագրությունների կնքման ականատեսն է, փաստ է, քննարկման ոչ ենթակա: Նույն հարցը եթե տանք Միշլին Քալմի Ռեյին, ապա նա եւս շվեյցարական պետության անունից կհիշեցնի, որ իր երկիրը ոչ միայն ճանաչել է Ցեղասպանությունը, այլեւ առաջին երկիրն է, որը քրեական պատիժ սահմանեց Ցեղասպանությունը ժխտողների համար: Բնականաբար Ֆրանսիայի երեկվա ու այսօրվա նախարարները ուղղակի չեն կարող չասել այն, ինչ ասաց իրենց նախագահը Երեւանում, Ֆրանսիայի հրապարակում, ու այն, ինչ «ասաց» իրենց Սենատը հունվարի 23-ին: Հետեւաբար, ինչպես Փարիզի, այնպես էլ Բեռնի համար, որը ընդգծենք, հայ-թուրքական գործընթացի դե յուրե միջնորդն է, Ցեղասպանության եղելությունը քննարկման թեմա չէ:

Ինչ վերաբերում է ցյուրիխյան իրադարձության վերջին մասնակցին, տիկին Քլինթոնին, ապա, ինչպես գրեթե բոլոր «կարիերային աճ» ունեցած ամերիկացի կոնգրեսական-սենատորները, տիկինը «իհարկե գիտի, որ եղածը Ցեղասպանություն է, բայց...»: Ուրեմն ստացվում է, որ այն մարդիկ, որոնք Նալբանդյանի ու Դավութօղլուի հետ էին Ցյուրիխում, եւ այն երկրները, որոնց պաշտոնապես ներկայացրել են այս մարդիկ, Ցեղասպանության եղելությունը կասկածի տակ չեն դնում, հետեւաբար այն քննարկման թեմա չէ:

Այսինքն, եթե Թուրքիան ծրագրում է արձանագրությունները առաջ քաշել՝ կասեցնելու Ցեղասպանության ճանաչման ալիքը, ապա այդ ծրագիրն ի սկզբանե դատապարտված է անհաջողության: Ու, որը խիստ հասկանալի է հայոց հարցի պատմության տարեգրքում, անգամ ռեալպոլիտիկի առումով Ցեղասպանության առնվազն համաեվրոպական ճանաչման ալիքը այսօրվա Անկարան կասեցնել չի կարող, թեկուզ բացելով Դավութօղլուի դարակները:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

**Հ. Գ. - ԱԺ-ում ՀՀԿ խմբակցության քարտուղար Գագիկ Մելիքյանը երեկ ասուլիսում համոզմունք հայտնեց, թե «մինչեւ մայիս զգալի տեղաշարժեր կլինեն հայ-թուրքական գործընթացում»:**

# Բարեգործություն շոտլանդական ոճով

Հայերը եւս մեկ օրով կարող են դառնալ շոտլանդացի: Այսօր երեկոյան «Ֆլորանս» ռեստորանային համալիրում տեղի կունենա «Բըրնսի ընթրիքը»: Սակայն մինչ այդ՝ Գաֆեսճյան արվեստի կենտրոնում երեկ պարկապզուկի կենդանի երաժշտության ներքո կիլտերով (ազգային տարազ) շոտլանդացիները հագիս ուտեսը հանձնեցին Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանին:

Շոտլանդացի բանաստեղծ Ռոբերտ Բըրնսը Հայաստանում երբեք չի եղել, բայց նրան հիշում են եւ այստեղ, եւ արդեն 14 տարի շարունակ մեզ մոտ եւս կազմակերպում են «Բըրնսի ընթրիքը»:

Ինչպես նշեց դեսպան **Քեթրին Լիչինը**, աշխարհի շատ երկրներում այս ընթրիքն արդեն ավանդույթ է դարձել: Դեսպանը նշեց, որ իրեն եւս շոտլանդացի է համարում, թեեւ ծնվել է Անգլիայում, բայց շոտլանդական ծագում ունի:

Իհարկե, հագիսը երեկ դեռ հում վիճակում էր, այսօր արդեն եփված ու համեմված կմատուցվի ներկաներին: Հագիսը շոտլանդական ավանդական ուտեստ է, պատրաստվում է ոչխարի ներքին օրգաններից:

Իսկ այսօրվա ընթրիքը զուտ ընթրիք չի լինելու. այն նպատակ ունի նաեւ գումար հավաքագրել բարեգործության համար: Անցյալ տարի «Բըրնսի ընթրիքի» ընթացքում հավաքագրվել է 27 հազար դոլար, որով իրականացվել են բարեգործական ծրագրեր: Օրինակ՝ «Զատիկ» մանկատան սաները մի տարի սովորել են անգլերեն ու համակարգիչ, հիվանդ եւ հատուկ կարիքներ ունեցող երեխաները եւս աջակցություն են ստացել:

Ընթրիքի մասնակցության տոմսն արժե 28 հազար դրամ, որի կեսն ուղղվելու է բարեգործական ծրագրերին:

Ընթրիքի կազմակերպիչներն են Հայ-բրիտանական գործարարության պալատն ու Երեւանում բրիտանական դեսպանատունը:

Ի. Պ.

ԱԶԱՏԱՄԱՐՏ

# Խոնարհ հերոսներ

## *Կարեն Մանվելյան*



Այսօր, ազգովին նշում ենք Հայոց բանակի 20-ամյա անցած պանծալի ուղին եւ հպարտորեն արձանագրում, որ մեր երկրի սահմանները ամուր պաշտպան ունեն՝ հանձինս հայ զինվորի եւ զինուժի: Ահա այդ առիթով **«Ազգը»** հյուրընկալվեց Արցախյան ազատագրական պայքարում զոհված 26-ամյա Կարեն Բախշիի Մանվելյանի մայրիկին՝ պատմաբան Ամալյա Գեւորգյանին: Հյուրընկալ օջախում, գողտրիկ մի անկյունից տուն մտնողներին կարծես բարեւում ու ժպտում է երիտասարդ Կարենի լուսանկարն ու ջերմագին ներս հրավիրում:

Այդ հուշ-անկյունում բոլոր այն փաստաթղթերն ու լուսանկարներն են, պատվոգրերն ու մեդալները, որոնք Ամալյա մայրիկը խնամքով մեկիկ-մեկիկ հավաքել է, դասավորել ու գեղեցիկ գրություններով իր սիրասուն որդու անցած ուղին ներկայացրել: Տան այդ հատվածը մոր ամենանվիրական վայրն է դարձել արդեն 20 տարի շարունակ, երբ որդու կորստի լուրը ստացվեց: Ամեն բացվող օրվա հետ Ամալյա մայրիկի հուշերը թարմանում են ու նա այդ բոլորը սիրով ու հպարտությամբ պատմում է իր Կարեն, Կարինե եւ Արմինե թոռներին:

Կարենը հաճախել է թիվ 165 դպրոցը, որտեղ գերազանց առաջադիմությամբ 10 տարի եղել է ողջ ուսուցչական կոլեկտիվի կողմից սիրված օրինակելի աշակերտ: Դպրոցական տարիներից Կարենը առանձնահատուկ ուշադրություն էր հատկացնում հայ ժողովրդի պատմությանը ու խնդրում էր մորը՝ ավելի մանրամասն պատմել հայ ժողովրդին պայքարի, հայկական զենքի հաղթանակների մասին: Հայրենասիրությամբ տոգորված Կարենը մեկնում է խորհրդային բանակ, որպեսզի տիրապետի զինվորական հմտություններին: Նրա մտքով անգամ չէր անցնում, որ այդ գիտելիքներն ընդամենը 1,5 տարի հետո իրեն շատ են պետք գալու: Իսկ երբ սկսվում է Արցախյան շարժումը, Կարենն իր գաղափարակիր ընկերների հետ զինվորագրվում է հայրենիքի ազատության ու անկախության համար պայքարին:

Արմենը, Վահագնը, Սամվելը, Կարենը, ահա այս երիտասարդներն էին, որոնք ՀՌԱԿ «Արմենական» ուսանողական ակումբի առաջին ծիծեռնակներն էին եւ, ցավոք, այդ անբաժան չորս ընկերները հայրենիքի սահմանների պաշտպանության զոհասեղանին դրեցին ամենաթանկ բանը՝ կյանքը:

Ամալյա մայրիկը հուզված պատմում էր, թե ինչպես էր մինչ այդ Կարենին ցնցել Սպիտակի երկրաշարժի բոթը եւ նա շտապել էր փրկարար ջոկատների կազմում օգնության ձեռք մեկնելու աղետից տուժածներին: Սակայն ուսման ծարավը հանգիստ չէր տալիս երիտասարդին եւ նա մեկ տարի անց ընդունվում է ԵՊՏՀ-ի (այն ժամանակ՝ ժողտնտեսության ինստիտուտ) ապրանքագիտական ֆակուլտետ: Հենց այդ ժամանակ էլ ալեկոծվեց ժողովուրդը եւ Թատերական հրապարակը դարձավ բոլոր հայերի հավաքատեղին, որտեղ հազարավորների հետ օրեր ու գիշերներ էր լուսացնում նաեւ Կարենը: Չորրորդ կուրսի ուսանող էր, երբ լուր տարածվեց, որ Կրասնոսելսկի Վահան գյուղի շրջակայքը պաշտպանության կարիք ունի, եւ Կարենը անմիջապես միացավ երկրապահ կամավորականների խմբին, մեկնեցին այդ ուղղությամբ ու մասնակցեցին Վահան գյուղի պաշտպանության համար մղվող մարտերին: Հենց այստեղ էլ Կարենը աչքի ընկավ իր հասակ ու արագ կողմնորոշումով ու շահեց մարտական ընկերների վստահությունը: Այդ ճիշտ կեցվածքի, պատերազմական գոտում արագ կողմնորոշվելու հատկությունների համար Կարենին վստահվեց մասնակցել զուգահեռ ընթացող Գորիս-Լաչին ճանապարհի ու միջանցքի ազատագրման մարտական գործողություններին: Ամիսներ անց, հերթական գյուղի ազատագրման թեժ մարտի ժամանակ, Կարենը մարտական առաջադրանք կատարելիս, թշնամու կրակահերթը իր վրա վերցրեց՝ փրկելով մարտական ընկերներին: Գնդակը խոցեց Կարենի սիրտը ու զրկեց երիտասարդ քաջազունին կյանքից: Կարենն ընդամենը 26 տարեկան էր 1992-ին, զոհվեց կյանքի քաղցրությունը չճաշակած: Ահա անցել է այդ օրվանից 20 տարի, սակայն Կարենի սխրանքների մասին դեռ պատմում են մարտական ընկերները, նրա հիշատակին ցերեկույթներ ու հուշ-երեկոներ կազմակերպում դպրոցում: Կարեն Մանվելյանի կիսանդրին եւ լուսանկարները այսօր «Փառքի թանգարանի» պատերից մեկն է զարդարում եւ ամեն այցելու, կամա թե ակամա, կանգ է առնում այդ ժպտադեմ երիտասարդի նկարների առջեւ ու արտաբերում. ափսոս, հազար ափսոս, քաջ հայորդի, դու անմահացար, որ մենք ապրենք ու վայելենք կյանքը... Այսպիսի տողեր են գրառված նաեւ հուշամատյանում:

Կարեն Մանվելյանի անձնուրաց նվիրումը հայրենիքին ՀՀ նախագահի կողմից գնահատվել է նրան հետմահու արժանացնելով «Արիության մեդալի», իսկ Հայաստանի Երկրապահ կամավորականների վարչության նախագահի կողմից պարգեւատրվել է «Հայաստանի երկրապահ» հուշամեդալով: Կարենի հերոսությունները հիշում ու գնահատում են նաեւ Արցախում: Դրա վառ վկան է Լաչինի Բերձոր հուշահամալիրի պատին փորագրված «Լաչինում զոհված ազատամարտիկների պայծառ հիշատակին» գրության տակ Կարեն Մանվելյանի անունը զոհվածների առաջին շարքում:

Այժմ Կարենը կլիներ 45 տարեկան, եթե չընդհատվեր նրա կյանքը հայրենիքի զոհասեղանին եւ երազանքները չմնային անկատար: Իսկ Ամալյա մայրիկի համար իր սիրասուն զավակը՝ միշտ կենդանի է. «Ինձ թվում է հիմա դուռը կբացվի ու ներս կմտնի, կգրկախառնվի ինձ հետ ու կասի՝ մամ ջան, ինչպես ես, ես եկա, ու կհամբուրի այտերս», հույսով ու սպասումով, թաց աչքերով դեռ որդու վերադարձին է սպասում սեւազգեստ մայրը:

Ոչինչ չի մոռացվել, ոչ ոք չի մոռացվել: Մխիթարանք ու խոնարհում բոլոր որդեկորույս մայրերին, քույրերին, հայրերին...

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱԶԳ **Միջազգային**

# Ավագ եղբայրը դժգոհ է կրտսերից

## *Ադրբեջանցի հրոսակի հակազդեցությունը Ֆրանսիային` չի բավարարել թուրքերին*

**«Ազգի»** նախորդ համարներում Թուրքիայի եւ Ադրբեջանի հարաբերություններին անդրադառնալիս, նկատի ունենալով թուրք-ադրբեջանական տարաձայնությունները, գրել էինք, որ «մեկ ազգ` երկու պետություն» կարգախոսը գործում է այն դեպքում, երբ խնդրո առարկա են դառնում հայերը, Հայաստանն ու Ղարաբաղը: Այսինքն, հայատյացությունն է պայմանավորում մեկ ազգի երկու պետության համերաշխությունը:

Ֆրանսիայի Սենատում Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը սակայն ցույց տվեց, որ թուրք-ադրբեջանական համերաշխությունը ճեղքված է տալիս, նույնիսկ հայատյացության երկուստեք դրսեւորումները դա չեն փակում: Դրա վառ ապացույցը «Ո՞ւր մնացիր, ազերի եղբայր» վերնագրով կառավարամետ «Ենի շաֆաքի» հոդվածն էր: Այս հոդվածը թուրքական թերթում հրապարակվել էր հունվարի 17-ին, այսինքն Սենատում ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի քվեարկությունից առաջ:

Քվեարկությունից հետո էլ, հունվարի 24-ին համանման հոդվածով հանդես եկավ «Եվրոնյուզի» թուրքական տարբերակ «Աբիաբեր» կայքէջը, որի հոդվածը հրապարակվել է «Հակազդեցություն են առաջացնում Ադրբեջանի թուրքական քաղաքականությունն ու Ֆրանսիայի հետ հարաբերությունները» վերնագրով:

Ահա թե ինչ է գրված. «Մինչ Թուրքիան ամենադժվարին օրերին շարունակում էր կատարել «եղբայրությունից» բխող իր պարտականությունները, Բաքվի վարչակարգը վերջին տարիներին սկսել է ավելի ու ավելի մենակ թողնել Անկարային:

Հեյդար Ալիեւի մահից հետո իշխանության եկած նրա որդի Իլհամ Ալիեւը վերջին երկու տարիներին պարզապես սառը պատերազմ սկսեց Անկարայի դեմ: Շեհիդների պուրակում թուրքական դրոշներն իջեցնելու, երկրում սովորող ուսանողներին եւ աշխատող Թուրքիայի քաղաքացիներին առօրյա կյանքում անընդմեջ դժվարություններ հարուցելու գայթակղությունից չխորշող Բաքվի վարչակարգը Ֆրանսիայում, այսպես կոչված, ցեղասպանության օրինագծի ընդունման ընթացքում նախընտրեց նկատելիորեն բարձրացնել հարաբերությունների մակարդակը Փարիզի հետ:

Քանի դեռ Թուրքիան ԱՄՆ-ի եւ Եվրոմիության ճնշումներին ենթարկվելու գնով շարունակ փակ է պահում Հայաստանի հետ սահմանը, Բաքվի վարչակարգը Ֆրանսիայի հետ բարեկամության խմբի նախագահի պաշտոնը հանձնելով Իլհամ Ալիեւի տիկնոջ` Մեհրիբան Ալիեւային, պարզապես խոր հիասթափություն էր պատճառում Անկարային: Ըստ դիվանագիտական շրջանակների, Ֆրանսիայում շրջանառվող հայկական օրինագծի դեմ գեթ մեկ քայլ չկատարած Ալիեւի վարչակարգի այս վերաբերմունքը շարունակվում է դրսեւորվել վերջին երկու տարիներին, իսկ արտգործնախարարությունը ջանք է գործադրում, որ հասարակությունը տեղեկացված չլինի այդ մասին: Կառավարամետ թերթերը փոքրատառ լուրերով շրջանցում են հայկական խարդավանքները: Մինչդեռ, հակառակ Ֆրանսիայի նկատմամբ Ադրբեջանի հիացմունքին, Նիկոլա Սարկոզին Ղարաբաղի հարցում պաշտպանում է Հայաստանի դիրքերը: Դրանով հանդերձ Ադրբեջանը հարկ չի համարում Մինսկի խմբի համանախագահող Սարկոզիին ասել, որ հետքայլ կատարի, որովհետեւ արդեն անկողմնակալ չէ:

Ադրբեջանի հակաթուրքական գործունեությունը այս ամենով չի սահմանափակվում: Երբ Ռուսաստանում Պուտինի վարչակարգը, հաշվի առնելով Թուրքիայի հետ հարաբերությունների հեռանկարը, մեծ մասշտաբի զեղչեր է անում բնական գազի սակագներում, եղբայրական Ադրբեջանը ե՛ւ գներն է ավելացնում, ե՛ւ հարյուրավոր միլիոն դոլարի վնաս է պատճառում Թուրքիային: Մինչ Բաքվի վարչակարգը ամեն տարի միլիոնավոր դոլարներ է շահել Բաքու-Ջեյհան նավթատարից, Թուրքիան 150 մլն դոլարի վնաս է կրել: Այս ճեղքվածքը փակելու համար Թուրքիայի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարը շարունակում է երկկողմ բանակցություններ վարել ադրբեջանցիների հետ»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Թուրքն ու ադրբեջանցին` խոսքի ազատության «ջատագո՞վ» Ստրասբուրգում

«Ֆրանսիայի Սենատում հունվարի 24-ին ընդունված թիվ 229 օրենքը խախտում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում սահմանված խոսքի ազատությունը», նշված է երեկ Ստրասբուրգում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում տարածված գրավոր հայտարարության մեջ, որ ստորագրել են 58 պատվիրակ, ի դեպ` հայտարարությունը, ինչպես նշվում է բոլոր նման փաստաթղթերի վրա, միայն ստորագրողների մոտեցման արտահայտությունն է:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակից թուրքական եւ ադրբեջանական պատվիրակությունների ներկայացուցիչների ստորագրությամբ հայտարարության մեջ նշվում է. «Օրենքը սահմանափակում է խոսքի ազատությունը, ինչպես նաեւ անհատական կարծիքը պաշտպանելու եւ անկախ ուսումնասիրություն իրականացնելու իրավունքը», հավելմամբ, թե հենց Սենատի իրավական հարցերով հանձնաժողովն այն նշել է որպես «հակասահմանադրական»:

Սեփական երկրներում, մասնավորապես Թուրքիայում եւ Ադրբեջանում խոսքի ազատության առնչությամբ խայտառակ վիճակը թողած` Ֆրանսիայում այն «պաշտպանելու» փորձ է ներկայացվում հայտարարությամբ, թեեւ գրավոր խոսքով հանդես գալու ողջ նպատակն ի հայտ է գալիս տեքստի վերջին հատվածում. «Սա վտանգավոր նախադեպ կարող է դառնալ անդամ այլ երկրներում էլ, իրենց հայեցողությամբ, խոսքի ազատությունը եւ անհատական այլ իրավունքներ սահմանափակելու համար»:

Հայտարարությունը ստորագրած թուրք եւ ադրբեջանցի պատգամավորների հետ, մի շարք եվրոպական երկրների պատվիրակների կողքին, նաեւ վրացի Գիորգի Կանդելակին է ֆրանսիացի գործիչներին կոչ արել «քայլեր ձեռնարկել, քանի դեռ «վնասը չի հասել անդառնալի փուլի»:

ԵԽԽՎ նստաշրջանների շրջանակներում բազմաթիվ հայտարարություններ են ընդունվում, որոնց տակ երկու տասնյակից ավելի ստորագրություն ունենալու դեպքում դրանք ներկայացվում են որպես «գրավոր հայտարարություններ» եւ ոչ մի դեպքում հռչակագրեր, անկախ նրանից, թե ինչ թեմայի են վերաբերում: Գրավոր հայտարարությունները կարող են տարածել` ունենալով նվազագույնը 20 ստորագրություն, որ պետք է ներկայացնեն 4 պատվիրակություն, միեւնույն ժամանակ, առնվազն երկու քաղաքական խումբ:

Ամեն դեպքում, այդպիսի հայտարարությունները չեն կարող ներկայացվել որպես ԵԽԽՎ ընդունած փաստաթղթեր, դրանք ընդունվում են ի գիտություն, կարող են օգտագործվել տարբեր նպատակներով եւ տարբեր ատյաններում, սակայն երբեք չեն ներկայացնում վեհաժողովի տեսակետը, այլ միայն նրանցը, ովքեր ստորագրում են հայտարարությունը:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստրասբուրգ

# EPP-ն թուրք պատվիրակի նամակն ընդունել է միայն ի գիտություն

Եվրոպայի խորհրդի Եվրոպական ժողովրդական կուսակցություն քաղաքական խումբը (EPP), որին մասնակից է նաեւ հայաստանյան պատվիրակ **Զարուհի Փոստանջյանը**, ԵԽԽՎ ստրասբուրգյան նստաշրջանի ընթացքում իր հանդիպումներում ծանոթացել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում թուրքական պատվիրակության ղեկավարի` բոլոր քաղաքական խմբերին ուղղված նամակին:

Խոսքը վերաբերում է Ֆրանսիայի Սենատում ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող օրենքի առնչությամբ թուրք պատվիրակի խնդրանքին` Եվրոպայի խորհրդի քաղաքական խմբերի կողմից որեւէ մեկնաբանություն կամ գնահատական հնչեցնելուն:

Ինչպես **«Ազգին»** տեղեկացրեց Զարուհի Փոստանջյանը, իր քաղաքական խմբում գրությունն ընդունել են ի գիտություն, բայց որեւէ քննարկում այդ առնչությամբ չի եղել: Ավելին, Զարուհի Փոստանջյանի հավաստիացմամբ, այդպիսի քննարկում չի էլ նախատեսվում:

Ա. Հ.

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

# Սաուդցիներն ու քաթարցիները կօգնեն սիրիացի ապստամբներին

## *ՄԱԿ-ի ԱԽ դռնփակ նիստ*



**Սաուդյան Արաբիան եւ Քաթարը պայմանավորվել են համատեղ ֆինանսավորել սիրիացի ապստամբներին: Այդ մասին հաղորդում է Լոնդոնի «Թայմս» թերթը, վկայակոչելով Բաշար Ասադի հայտնի հակառակորդներից մեկի հայտարարությունը:**

**Իր անունը չհրապարակելու պայմանով այդ անձնավորությունն ասել է, որ վերջին օրերին Քաթարի եւ Սաուդյան Արաբիայի ներկայացուցիչների հանդիպումների ընթացքում քննարկվել են Ասադի հակառակորդներին օգնելու տարբերակներ: «Սաուդցիներն ասացին, որ կարող են օգնել ամեն ինչով», պատմել է «Թայմսի» զրուցակիցը:**

**Նա մանրամասնել է, որ ընդդիմադիրներն այժմ ամենից շատ զենքի ու զինամթերքի կարիք ունեն: Ապստամբները միջազգային ընկերակցությանը խնդրում են Սիրիայի մի շարք շրջաններում օտարերկրացիների վերահսկողության ներքո ստեղծել «բուֆերային գոտիներ», ուր հնարավոր կլիներ զենք առաքել:**

**Թերթի աղբյուրը պատմել է, որ Թուրքիան արդեն մշակել է Սիրիայի հյուսիսում նման գոտիների ստեղծման ծրագրեր: Կան նաեւ առավել ակտիվ միջամտության ծրագրեր. խոսքը սիրիական ռազմակայանների եւ օդանավակայանների ռմբակոծության մասին է:**

**Սիրիայի պաշտպանության նախարարության նախկին գլխավոր աուդիտոր Մահմուդ Հաջ Համադը իր հերթին «Թայմսին» ասել է, որ կառավարական ուժերն արտերկրում հավաքագրում են վարձկան դիպուկահարների, որոնց օգտագործում են խռովարար քաղաքների դեմ: Այդ դիպուկահարների մեծամասնությունը պաշտոնապես կոչվում է «զինվորական խորհրդատու»: Նրանք Սիրիա են գալիս Լիբանանից եւ Իրանից: Նրանց գործունեությունը ֆինանսավորվում է Իրանից:**

**Համադի խոսքերով` բուն Սիրիայում դիպուկահարների պատրաստմանը ժամանակին մեծ ուշադրություն չի դարձվել, ուստի Դամասկոսում զգացվում է նման մարդկանց պակասը: Արտերկրում հավաքագրված դիպուկահարների թիվը Սիրիայում արդեն կազմում է մի քանի հազար:**

**Ըստ Համադի, Սիրիայի տնտեսությունը չի դիմանում ներկայիս ծանրաբեռնվածությանը եւ աստիճանաբար փլուզվում է: Նրա կարծիքով` մինչեւ լիակատար ֆինանսական փլուզումը մնացել է մեկ ամսից ոչ ավելի, քանի որ հիմա իրանցիներն անգամ չեն կարողանում Սիրիայի վարչակարգին օգնել սեփական դժվարությունների պատճառով:**

**Նաեւ հաղորդվում է, որ ՄԱԿ-ի ԱԽ-ն դռնփակ նիստում քննարկելու է հերթական հակասիրիական բանաձեւի նախագիծը: Արաբական լիգայի երկրները փաստաթուղթը պատրաստել են Արեւմուտքի հետ համատեղ: Նախագծի գլխավոր պահանջը Բաշար Ասադի ինքնակամ հրաժարականն է: Ռուսաստանն իր հերթին ԱԽ-ին ներկայացրել է մեկ ուրիշ` ավելի մեղմ բանաձեւի նախագիծ եւ հավանաբար վետո կդնի Արաբական լիգայի փաստաթղթի վրա:**

# Ամերիկյան բանակի թվակազմը կրճատվում է

**Առաջիկա 5 տարում ԱՄՆ զինված ուժերի թվակազմը կրճատվելու է գրեթե 100 հազարով: Կրճատումներ նախատեսված են արդեն 2013 թվականի պաշտպանական բյուջեում, որ ներկայացրել է Պենտագոնի ղեկավար Լեոն Պանետտան: Գերատեսչության կայքէջում հրապարակված է համապատասխան հաղորդագրություն:**

**Բանակի գործող զինծառայողների թվակազմը 562 հազարից կիջեցվի 490 հազարի, իսկ ծովային հետեւակի կորպուսի զինծառայողներինը` 202 հազարից 182 հազարի: Այսպիսով կկրճատվի 92 հազար զինծառայող: Defense News-ը պարզաբանում է, որ նույնիսկ այդ կրճատումից հետո էլ ամերիկյան զորքերի թվակազմը կմնա 2001-ի մակարդակից բարձր:**

**Եվրոպայում կմնա ամերիկյան բանակի չորս բրիգադ: Լոնդոնի «Գարդիան» թերթի տվյալներով, ԱՄՆ-ը մտադիր է ավելացնել հատուկ ջոկատների թիվը, որոնցից են 2011-ին Ուսամա բեն Լադենին սպանած «ծովակատուները»:**

**Կրճատման ենթակա են նաեւ C-5A Galaxy տիպի 27 փոխադրական օդանավ, C-130 Hercules տիպի 65 օդանավ, ինչպես նաեւ C-27 փոխադրական օդանավերի ամբողջ համակազմը (38 մեքենա): Միաժամանակ նախատեսվում է օդուժը համալրել Predator եւ Reaper անօդաչու թռչող սարքերով:**

**Ներկայիս 11 ավիակիրներից ոչ մեկը չի կրճատվելու: Պենտագոնը մտադիր է դուրս գրել յոթ հածանավ: Հետաձգվում են «Վիրջինիա» նոր սուզանավի ձեռքբերումը եւ նոր սերնդի այն սուզանավերի կառուցումը, որոնք պետք է հանդերձավորվեն հեռահար միջուկային հրթիռներով:**

**Խնայողության նպատակով նախատեսվում է 2015-ից կրճատել զինծառայողների ռոճիկների աճը: Նաեւ կավելացնեն բուժապահովագրության ուղղված մուծումները:**

**Զինված ուժերի թվակազմի կրճատումը նախատեսված է հունվարի 5-ին հրապարակված ԱՄՆ բանակի նոր ռազմավարությամբ:**

**Պենտագոնը 2013 ֆինանսական տարում Կոնգրեսից խնդրել է 525 մլրդ դոլար որպես հիմնական բյուջե եւ 88,4 մլրդ` արտերկրում ռազմական գործողությունները շարունակելու համար: 2012 ֆինանսական տարվա համեմատությամբ պաշտպանական ծախսերը կրճատվելու են 5 տոկոսով: Պենտագոնը մտադիր է առաջիկա 5 տարում խնայել 259 մլրդ, առաջիկա 10 տարում` 487 մլրդ դոլար:**

# Իտալացիների հարգանքի տուրքը՝ Հրանտ Նազարյանցին

1962 թ. հունվարի 25-ին իտալական Բարի քաղաքում անհայտության եւ աղքատության մեջ մահացավ հայ բանաստեղծ Հրանտ Նազարյանցը: Նրա աճյունը ամփոփվեց ճամփեզրի մի անշուք հողաթմբի տակ:

2012 թ. հունվարի 25-ին իտալական Կազամասիմա քաղաքապետարանի եւ Բարիի Հրանտ Նազարյանցի գործունեության ուսումնասիրման կենտրոնը նշեց, ինչպես խմբագրության ստացած տեղեկության մեջ է գրված, Պուլիայի հայ բանաստեղծ Հրանտ Նազարյանցի մահվան 50-րդ տարելիցը՝ մի շարք հատուկ միջոցառումներով եւ կոնֆերանսներով: Այս իրադարձությունը նշանավորվեց նաեւ Իտալական փոստային ծառայության մշակած եւ թողարկած անվավեր համարելու հատուկ փոստային կնիքով, որը կիրառվեց հիշատակային բացիկների վրա, Կազամասիմա քաղաքապետարանում ժամանակավոր գործող փոստային բաժանմունքում, այդ օրը: Իտալիայից ստացված այս լուրը ազգային տարբեր զգացումների առիթ տալով, ուրախալի անակնկալի հետ նաեւ ամոթալի էր՝ մեր անտարբերությամբ:

Հրանտ Նազարյանցը արեւմտահայ այն բանաստեղծներից է, որը հայ գրականագիտության ուսումնասիրողների ուշադրությունից հանիրավի դուրս է թողնվել, երկար ժամանակ անտեսվել, թեպետ նա ստեղծագործել ու գրական գործունեություն ծավալել է Պոլսի գրական ամենաբուռն զարգացումների շրջանում, երբ գրական միջավայրը ծավալվում էր Միսաք Մեծարենցի, Եղիա Տեմիրճիպաշյանի, Գրիգոր Զոհրապի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Երվանդ Օտյանի, Տիրան Չրաքյանի, Վահան Թեքեյանի եւ մյուսների ստեղծագործական ոգու վերընթացներով: Եվ նա այս միջավայրում աննկատ գործող մշակ չէր. արեւմտահայ պարբերական մամուլի էջերին նրա անունը բազմիցս ներկա է եղել՝ թարգմանություններով, բանաստեղծություններով, հոդվածներով, խմբագրել ու հիմնել է պարբերականներ: Հրանտ Նազարյանցը հայկական սիմվոլիզմի ամենավառ արտահայտված քերթողներից մեկն է: Այդուհանդերձ, նա մնացել է հայ գրական լուսանցքներում, նրա անունը գրեթե չի հիշատակել ոչ արեւմտահայ, ոչ արեւելահայ պարբերական մամուլը, գրականության ուսումնասիրողները չեն անդրադարձել նրա ժառանգությանը. մնացել է անցյալի մոռացված էջերին:

*«Անտառի հզորությունն ու գեղեցկությունը, հարստությունն ու հմայքը միայն հսկա կաղնիները չեն. ամեն մի թուփ, շիվ ու ծառ եւ խոնարհ թփի տակ ծվարած անտես ու աննկատ, համեստ ու անանուն ծաղիկը իր յուրատեսակ մասն է ավելացնում անտառի գեղեցկությանը, անտառը կայանում է - գոյություն ունի անտառային ողջ աշխարհի բազմաձեւ ու բազմագույն ամբողջությամբ: Եվ գրականագետի, գրականության պատմաբանի խնդիրը պետք է լինի տեսնել ու բացահայտել յուրաքանչյուր տաղանդավոր գրողի ստեղծագործության խորքը, հմայքը, յուրահատկությունները եւ կարողանա գրողին ու իր գրականությունը տեսնել հայ գրական կյանքի ընդհանուր ընթացքի մեջ»*:

2008 թ. «Սարգիս Խաչենց. Փրինթինֆո» հրատարակչությունների կողմից լույս ընծայվեց Հրանտ Նազարյանցի «Աստղահեւ մենութիւն» ժողովածուն, որը կազմել, առաջաբանը եւ ծանոթագրությունը գրել է Երվանդ (Յուրի) Տեր-Խաչատրյանը: Վերոհիշյալ մեջբերումը գրքի առաջաբանից է, եւ կարծում ենք գրականագետի ուսանելի այս խոսքը պետք է որ հետեւորդներ ունենա, ի դեմս գրական նոր սերնդի:

Ժողովածուն բովանդակում է «Խաչուած երազներ» գիրքը (որը Հր. Նազարյանցի կյանքի ընթացքում հրատարակված հայերեն բանաստեղծությունների միակ գիրքն է), արեւմտահայ մամուլի էջերում մնացած բանաստեղծություններ, չափածո եւ արձակ թարգմանություններ, դիմանկարներ, էսսեներ, հոդվածներ, նամակներ՝ իր երկերի հայերեն ամբողջական 1-ին հրատարակությունը:

Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում ծնված Հրանտ Նազարյանցը սովորել է Ռեթեոս Պերպերյանի վարժարանում, երիտասարդ տարիքում մեկնել է Փարիզ, ապա Լոնդոն՝ կրթության պակասը լրացնելու: Վերադարձին շատ արագ մտել է Պոլսի հայ գրական միջավայր. իր առաջին հրապարակումը մամուլում թարգմանական էր, 1904-ին, ապա եւ հայտնվեց բանաստեղծությամբ: Առաջին տպագիր գիրքը լույս է տեսնում 1912-ին՝ «Խաչուած երազներ» (տիտղոսաթերթը նկարել եւ կլիշեն Վենետիկում պատրաստել էր Կոստան Զարյանը) խորագրով, արժանանում գրական միջավայրի ուշադրությանը, Ռուբեն Զարդարյանի, Մեռուժան Պարսամյանի, Դանիել Վարուժանի դրվատական խոսքերին:


Գործ՝ իտալացի հեղինակի, 1915թ.

Գրական-գեղագիտական կողմնորոշումների ու չափանիշների, մտածողության ընդհանրությունը նրան մտերմացնում է բարձրաճաշակ ու ազնվակիրթ Կոստան Զարյանի հետ: Երկուսով գրական հրավեր-հավատո հանդանակ են հրապարակում, փորձում նոր գաղափարներ, նոր շարժում ներմուծել, փոփոխություն իրականացնել պոլսահայ մտավորական միջավայրում: Բանաստեղծական այն զգացումները, գեղագիտական վերաբերմունքը, լուսամիտ գաղափարներն ու ձգտումները, որով ապրում էին այսպիսի անձինք, իրականության հետ գրեթե եզրեր չէին կարող ունենալ, հոգեւոր այդ կամքը խզված էր, չկար. նրանք այլ հուն էին մտած, այսպես ասած, իրականությանը այլընթաց էին: Այս ճաշակն ու մտածողությունն էլ սակայն գտնում է համախոհություն. արեւմտահայ բանաստեղծության մեկ այլ առեղծվածային կերպար, հոգեկերտվածքով բարդ ու ճակատագրով դժբախտ Եղիա Տեմիրճիպաշյանը մեծապես ազդել է Հր. Նազարյանցի վրա: Նա կիսել է Եղիայի կյանքի ամենածանր օրերը, հոդվածով առաջարկ է արել տոնել մտավորականի գրական գործունեության հոբելյանը, բանաստեղծի ինքնասպանությունից հետո Մաղաքիա Օրմանյանից հանդիսավոր հուղարկավորության թույլտվություն է ստացել, հետագայում զբաղվել նրա գրական ժառանգությամբ. հրատարակել է «Եղիա Տեմիրճիպաշյանի սիրային նամակները. 1886-1889» գրքույկը իր առաջաբանով: Նմանապես սատարել է արեւմտահայ մեկ այլ տարաբախտ բանաստեղծի, հոգեպես կարեկից եղել Հերանուշ Արշակյանին: Եվ մահից հետո իր միջոցներով հրատարակել է բանաստեղծությունները: Վահան Մալեզյանին գրած նամակում նրան անվանում է փափուկ բանաստեղծուհի, խնդրում է նրա ուշադրությունը այդ «տխրանուշ մեռելածաղկին վրայ»:

Իր ժամանակի ամենազարգացած մտավորականներից մեկը՝ Հրանտ Նազարյանցը չէր կարող անմասն մնալ հայ հասարակության բնորոշ հիվանդությունից: Ծայր առած գրական հալածանքները, նրա հասցեին մամուլում վիրավորական հրապարակումները, նաեւ ընտանեկան հանգամանքները, դժվարին կացությունը նրան ընդմիշտ հեռացրին Պոլսից ու պոլսահայ գրական միջավայրից:

Հայության սեւ մղձավանջից 2 տարի առաջ, 1913-ին նա մեկնեց Իտալիա եւ կյանքի վերջին 48 տարին ապրեց Բարի քաղաքում, որտեղ՝ օտարության մեջ նրան սպասում էին մերթ անապահով, մերթ բարվոք օրեր: Նա ապրում է հայ գրական կյանքից ու միջավայրից կտրված, բացառապես իտալական միջավայրում: Բարին դառնում է իր երկրորդ հայրենիքը, այստեղ սակայն զարգացած կիրթ մտավորականի նրա կերպարը ոչ միայն ջերմորեն է ընդունվում, նաեւ գնահատվում է: Նա գրական գործունեության հիրավի բեղմնավոր ժամանակներ է ապրում: Իտալացի հայտնի գրողների թարգմանությամբ հաջորդաբար լույս են տեսնում նրա ժողովածուները, ֆրանսերեն թարգմանվում է «Խաչուած երազներ»-ը եւ տպագրվում մամուլում: Ավելի ուշ իտալերենով հրատարակվում են բանաստեղծի «Վահագն» ժողովածուն, «Երեք պոեմ» ծավալուն գիրքը, ապա թարգմանվում «Տիեզերական ողբերգության մեծ երգը»: Այդ շրջանում ուսումնասիրում է Պ. Դուրյանի գրականությունը, նրան նվիրված աշխատություններ է գրում, իտալերեն է թարգմանում «Թատրոն կամ թշվառներ» պիեսը, բազմաթիվ այլ ուսումնասիրություններ կատարում: Իտալացի գրող Ռոբերտո Սարվազիի հետ խմբագրում է Fantasma ամսագիրը, որտեղ հրատարակում է հայ բանաստեղծների գործեր, խմբագրական աշխատանքներ է տանում իտալական կարեւոր հանդեսներում:

Հրանտ Նազարյանցը ընտրվում է Իտալիայի ակադեմիայի անդամ, նշանակվում բանաստեղծության մասնաճյուղի նախագահ, իտալացի մտավորականները նրան ներկայացնում են Շվեդական ակադեմիային իբրեւ Նոբելյան մրցանակի թեկնածու: Այսպես են գնահատել հայ բանաստեղծին իտալական հողում, որին նա նվիրեց իր մտավորական կյանքի 48 տարիները, տրվեց աշխարհի հարուստ այդ մշակույթին, դարձավ նրա մի մասնիկը՝ տարածելով նաեւ իր ազգային մշակույթը, գրականությունը:

Ահա այսպես. բանաստեղծի մահից 50 տարի անց իտալացիները նման պատշաճ հարգանքով են հիշատակում նրա անունը, նրա լուսավոր գործունեությունը:

Իսկ մե՞նք, մենք մոռանում ենք, մոռանում աններելիորեն, աղքատացնում անցյալի մեր ժառանգությունն ու մեր այսօրը:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

«ՄԱՐՄԱՐԱ» ՕՐԱԹԵՐԹԻ 70-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

# Իսթանպուլի մէջ պատմական գիշեր մը

**15 յունուար 2012 կիրակի գիշեր, ես եւ կողակիցս մեծ բախտ ունեցանք ներկայ գտնուիլ Իսթանպուլի «Ճեվահիր» հիւրանոցի հանդիսասրահին մէջ՝ ունկնդրելու հայ երաժշտութեան շունչի եւ հայ բանաստեղծութեան նուրբ զգացումին իրարու մէջ խմորումով ու հիանալի ներդաշնակութեամբ ծնունդ առած սքանչելի ստեղծագործութեան մը՝ «Դարէ դար Աղթամար» օրաթորիոն, «Մարմարա» օրաթերթի 70-ամեակի յոբելեանի առթիւ, այսինքն առաջին ունկնդրութեան: Ըստ իս, արուեստի միջազգային չափանիշներով գնահատելի այս հրաշալի օրաթորիոն յօրինուած է հանրածանօթ երաժշտագէտ Մաժակ Թոշիկեանի կողմէ, պոլսահայ գրականութեան հզօր գրիչներէն բանաստեղծ բժիշկ Իգնա Սարըասլանի նոյնանուն «Դարէ դար Աղթամար» բանաստեղծութենէն ներշնչուելով: Օրաթորիոն ներկայացուեցաւ գերգնահատելի յաջողութեամբ, պոլսահայ համայնքի ծանօթ ղեկավար Յակոբ Մամիկոնեանի մականի տակ տաղանդաւոր մեներգիչներ Գէորգ Դաւիթեանի, Այլին Աքէշի, Տիգրան Գարակէօզեանի եւ «Լուսաւորիչ» երգչախումբի եռանդուն անդամներու կողմէ ու Յակոբ Կիւլեչի գլխաւորած պարախումբին ցուցադրած հայկական պարերու ընկերակցութեամբ:**

**Այդ գիշեր աւելի քան 1200 հրաւիրեալներ միասնաբար ապրեցանք հայ մշակոյթի խնջոյքի գիշեր մը, ստեղծագործութեան մը ծնունդը: Հոյակապ ներկայացում մը, զոր մեծ հրճուանքով ու հպարտութեամբ ունկնդրեցինք: Անշուշտ թէ պոլսահայ կեանքի անցեալի մէջ նմանածեւ գիշերներ ապրուած է, սակայն վերջին 40-50 տարիներու ընթացքին, երբ հայ մշակութային կեանքի մէջ արժէքներու ու ժառանգներու «մաշում» մը կայ, «Դարէ դար Աղթամար» ստեղծագործութիւնը ալ աւելի իմաստալից կ՚ըլլայ ու կը հասնի իր իսկական արժէքին, գնահատանքի գագաթնակէտին: Այդ գիշեր ոչ միայն մշակութային խնջոյքի գիշեր մը, այլ պատմական գիշեր մը ապրեցանք, որ յիշողութեան մէջ պիտի նոյնանայ «Մարմարա»ի 70-ամեակին հետ:**

**Մեր երանաշնորհ Գարեգին Ա. կաթողիկոսի հետեւեալ «Հայ գիրքը միւռոն է, մեր ժողովուրդի զաւակներուն համար: Ան որ հայ գիրք կը կարդայ, կը միւռոնուի հայութեամբ», խօսքերէն ներշնչուելով, կուզեմ ըսել, թէ «Հայ թերթը Սուրբ Մեսրոպ Մաշտոցի սրբալոյս կանթեղն է մեր ընթերցասէր ժողովուրդի զաւակներուն համար: Ան որ հայ թերթ կը կարդայ, կը լուսաւորուի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի սրբատառ լոյսով»:**

**Հայ թերթը, հայ ընթերցողին ջերմ գուրգուրանքին, հայ ընթերցողն ալ հայ թերթին մտերիմ ընկերութեան պէտք ունի:**

**Բոլորին վարձքը կատար, իսկ մեր սիրելի «Մարմարա»ին ալ յաւերժութիւն:**

ԲԺԻՇԿ ՍԱՐԳԻՍ ԱՏԱՄ

# Webծիրան համահայկական առցանց կինոփառատոնի հաղթողները հայտնի են

**ՎիվաՍել-ՄՏՍ-ից տեղեկացանք, որ ամփոփվել են «Webծիրան» համահայկական առցանց կինոփառատոնի արդյունքները:**




**Մասնագիտական ժյուրիի (Արա Խանջյան, կինոգետ Սիրանույշ Գալստյան, լրագրողներ՝ Գոհար Հակոբյան, Կարինե Ռաֆայելյան: Ժյուրիի նախագահ՝ կինոգետ Միքայել Ստամբոլցյան) որոշմամբ մրցանակների են արժանացել հետեւյալ ֆիլմերը. գլխավոր մրցանակը նվաճեց (1000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ) «Աշնան արեւ» ֆիլմը (ռեժ. Դիանա Կարդումյան): Հատուկ մրցանակը տրվեց (500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ) «Հասվող ճակատագրերի հանգրվանը» ֆիլմին (ռեժ. Արսեն Այրապետյան): Խրախուսական մրցանակներ են ստացել «Թեթեւ հպում» (ռեժ. Նարե Մկրտչյան), «Նախշոյի պարտեզը» (ռեժ. Գոհար Խաչատրյան), «Էն ուրիշ Ֆրունզիկը» (ռեժ. Հովհաննես Պապիկյան), «Օգնիր նրանց հիմա» (ռեժ. ԱրտՆերսես), «Bye-Bye» (ռեժ. Արեգ Մկրտչյան, Հրայր Լազյան, Աշոտ Հարությունյան) ֆիլմերին:**

**«Webծիրան» համահայկական առցանց կինոփառատոնը մեկնարկել էր 2011թ. նոյեմբերի 15-ին՝ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի եւ Webtv.am ինտերնետ հեռուստատեսության նախաձեռնությամբ: Փառատոնի հովանավորը ՎիվաՍել-ՄՏՍ-ն է:**

**«Զարգացող աշխարհում անխուսափելի է ժամանակակից տեխնոլոգիաների ներթափանցումը նաեւ մշակույթի բնագավառ, ինչը ողջունելի է եւ խրախուսում է տաղանդի բացահայտմանը: Տեխնոլոգիական լուծումների կիրառումը, սվյալ պարագայում ինտերնետը, ստեղծագործողին թույլ է տալիս առանց նյութական մեծ ռեսուրսներ օգտագործելու՝ իր ասելիքը հասցնել լայն հասարակությանը: Չափազանց կարեւոր գործոն, ինչի կարիքն ունեն կինոարվեստն ու սկսնակ ստեղծագործողները: Շնորհավորում եմ նորարարական այս փառատոնի հաղթողներին եւ հույսով եմ, որ այս հաղթանակը լուրջ ազդակ կհանդիսանա, որպեսզի հաղթող ճանաչված ռեժիսորները հասնեն ավելի մեծ հաջողությունների», նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**Կինոփառատոնի ընթացքում ցուցադրվել է տարբեր ժանրերի 49 ֆիլմ: Ավելի քան մեկ ամսում, ներկայացված ֆիլմերը դիտել են 42.032 անգամ:**

**«Webծիրան» համահայկական կինոփառատոնին մասնակցելու հնարավորություն էր տրված Հայաստանում եւ արտերկրում ապրող հայ կինոռեժիսորների: Մրցույթին կարող էին ներկայացվել մինչեւ 20 րոպե տեւողությամբ, առանց ժանրային սահմանափակումների, տեխնիկական յուրաքանչյուր միջոցով նկարահանված ֆիլմեր:**

**Ժյուրիի անդամների գնահատականները եւ ընդհանուր արդյունքները կարելի է տեսնել webtv.am կայքէջում:**

# Անակնկալ պարտություն հետնապահի հետ մրցավեճում

Մեկօրյա հանգստից հետո Վեյք Ան Զեեի շախմատի մրցաշարի մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջ՝ անցկացնելով 11-րդ տուրի հանդիպումները: Մրցաշարի միանձնյա առաջատար Լեւոն Արոնյանը սպիտակներով մրցում էր աղյուսակը եզրափակող չեխ գրոսմայստեր Դավիթ Նավարայի հետ: Թվում էր, թե Արոնյանը հեշտությամբ կհաղթի մրցակցին ու գլխավոր մրցանակին արժանանալու լուրջ հայտ կներկայացնի: Սակայն հայ շախմատիստն իր երկրպագուներին տհաճ անակնկալ մատուցեց: Նավարան շատերի համար անսպասելի պարտիայի միջնամասում մեկ նավակի առավելություն ստացավ: Ճիշտ է, հետագայում Արոնյանին հաջողվեց գրեթե հավասարեցնել խաղը ու մրցակցի ձիու դիմաց 2 զինվոր ուներ: Բայց Նավարային հաջողվեց պարտիան հաղթական ավարտի հասցնել: 60-րդ քայլին Արոնյանը հանձնվեց՝ կրելով մրցաշարում անդրանիկ պարտությունը: Իսկ Նավարան առաջին անգամ վայելեց հաղթանակի բերկրանքը:



Չնայած անհաջողությանը, Արոնյանը 7,5 միավորով պահպանեց առաջատարի դիրքը: 2-րդ տեղում ընթացող Վասիլի Իվանչուկն էլ այս տուրում անհաջողության մատնվեց Բորիս Գելֆանդի հետ պարտիայում՝ նույնպես կրելով անդրանիկ պարտությունը: Նա 6,5 միավորով նահանջեց 4-րդ հորիզոնական: Նրան շրջանցեցին 7-ական միավոր վաստակած Մագնուս Կառլսենն ու Թեյմուր Ռաջաբովը, որոնք հաղթեցին համապատասխանաբար Վեսելին Թոփալովին ու Վուգար Հաշիմովին: Իտալացի Ֆաբիանո Կարուանան հաղթելով Անիշ Գիրիին, վաստակեց 6,5 միավոր: 5,5-ական միավորով հաջորդ տեղերում են Սերգեյ Կարյակինն ու Գատա Կամսկին: Կարյակինը պարտության մատնեց Լյուկ վան Վելիին, իսկ Կամսկին հաշտություն կնքեց Հիկարու Նակամուրայի հետ:

Ավարտական 2 տուրերում Արոնյանը մրցելու է Գելֆանդի եւ Ռաջաբովի հետ:

C խմբի մրցաշարում Էլինա Դանիելյանը ոչ-ոքի խաղաց Բասկարան Ադհիբանի հետ ու վաստակեց 3,5 միավոր: 8,5-ական միավորով առաջատարներն են Մաքսիմ Տուրովն ու Հանս Տիկանենը:

# Անձնական ռեկորդն էլ չօգնեց հայ գեղասահորդին շարունակելու պայքարը

Շեֆիլդում ընթացող գեղասահքի Եվրոպայի առաջնությունում Հայաստանի միակ ներկայացուցիչ Սլավիկ Հայրապետյանն ավարտեց ելույթները: Տղամարդկանց մենասահքի կարճ ծրագրում 15-ամյա հայ գեղասահորդը վաստակեց 45,75 միավոր, ինչն անձնական ռեկորդ էր նրա համար: Նախկինում նրա լավագույն արդյունքը 45,32 միավորն էր: Սակայն չնայած անձնական ռեկորդին, Սլավիկը չկարողացավ տեղ զբաղեցնել 24 ուժեղագույնների շարքում, ինչը հնարավորություն կընձեռեր շարունակելու պայքարը: Սլավիկը 29 մասնակիցների մեջ գրավեց նախավերջին տեղը՝ առաջ անցնելով միայն թուրք գեղասահորդից:

Կրկին հիշեցնենք, որ Սլավիկ Հայրապետյանը Եվրոպայի առաջնության ամենակրտսեր մասնակիցն էր: Ըստ գեղասահքի ՀՀ ֆեդերացիայի նախագահ Սամվել Խաչատրյանի, պատանի հայ գեղասահորդի արդյունքն աննախադեպ է հայկական գեղասահքի համար՝ հաշվի առնելով նաեւ խորհրդային տարիներին մեր մարզիկների ելույթները: Սլավիկն առաջինն է հայ գեղասահորդներից, որ բարձր արդյունքով հաղթահարեց որակավորման փուլի արգելքը: Ֆեդերացիայի նախագահի կարծիքով, եթե Սլավիկը մասնակցեր Ինսբրուկում կայացած պատանեկան ձմեռային օլիմպիական 1-ին խաղերին, ապա տեղ կզբաղեցներ լավագույն հնգյակում:

Առաջիկայում պատանի գեղասահորդին նոր փորձություն է սպասում: Նա կմասնակցի փետրվարի 27-ից մարտի 4-ը Մինսկում կայանալիք գեղասահքի աշխարհի պատանեկան առաջնությանը:

# Օլեգ Մասկաեւը մտադիր է վերադառնալ ռինգ

WBC-ի վարկածով գերծանրքաշային կարգի աշխարհի նախկին չեմպիոն, 42-ամյա ռուսաստանցի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Օլեգ Մասկաեւը մտադիր է վերադառնալ ռինգ: Նա ցանկանում է մենամարտել աշխարհի նախկին չեմպիոն, 39-ամյա ամերիկացի Հասիմ Ռահմանի հետ: Սակրամենտոյում բնակվող Մասկաեւն արդեն սկսել է ակտիվորեն նախապատրաստվել այդ մենամարտին:



Նախկինում Մասկաեւը 2 անգամ Ռահմանին նոկաուտի է ենթարկել: Առաջին մենամարտը կայացել է 1999-ին, 2-րդը՝ 7 տարի անց, որի ժամանակ Պովետկինը նվաճեց WBC-ի չեմպիոնական գոտին: Իր վերջին մենամարտը Մասկաեւն անցկացրել է 2009-ի դեկտեմբերին՝ տեխնիկական նոկաուտով առաջին ռաունդում պարտվելով Նագի Ագիլերին:

Ինչպես հայտնի է, փետրվարի 25-ին կայանալիք Ալեքսանդր Պովետկինի եւ Մարկո Հուկի մենամարտի հաղթողը պետք է հաջորդ 6 ամսվա ընթացքում մրցի Հասիմ Ռահմանի հետ: Տեղեկանալով այդ մասին, Մասկաեւի մենեջեր Ֆրեդ Կեշը հանգել է այն մտքին, որ Ռահմանի հետ կարող է մենամարտել Օլեգը: Ճիշտ է, առայժմ հայտնի չէ, թե երբ կկայանա այդ մենամարտը:

Ինչ վերաբերում է Պովետկին-Հուկ մենամարտին, ապա բուքմեյքերներն առայժմ նախապատվությունը տալիս են ռուսաստանցի բռնցքամարտիկին: Պովետկինի հաղթանակի գործակիցը 1,2 է, Հուկինը՝ 2,1:

# Կոտդիվուարցիները մտան հաջորդ փուլ

Ֆուտբոլի Աֆրիկայի գավաթի խաղարկությունում B խմբում հանդես եկող թիմերն անցկացրին 2-րդ տուրի հանդիպումները: Կոտ դ՛ Իվուարի հավաքականը, որին մասնագետներից շատերը գլխավոր մրցանակի հավակնորդների թվում են դասում, 2-0 հաշվով հաղթելով Բուրկինա Ֆասոյի ընտրանուն, վաստակեց 6 միավոր եւ ժամկետից շուտ հաջորդ փուլի ուղեգիր նվաճեց:

2-րդ ուղեգիրը նվաճելու լավ հնարավորություն ունի Անգոլայի հավաքականը, որը ոչ-ոքի ավարտեց սուդանցիների հետ մրցավեճը: Մրցակիցները 2-ական գնդակ փոխանակեցին: Անգոլայի հավաքականն ունի 4 միավոր:

## ՖՈՒՏԲՈԼ

# «Քինգ Դելյուքսը» շարունակեց հաղթարշավը

Աբովյանի նորաստեղծ «Քինգ Դելյուքս» ֆուտբոլային թիմը շարունակում է հաղթել մրցակիցներին ստուգողական հանդիպումներում: Հերթական հաղթանակն Արմեն Սանամյանի սաները տոնեցին «Բանանց-2»-ի նկատմամբ՝ 3-2: Աբովյանցիներից 2 գոլի հեղինակ դարձավ Արա Հովհաննիսյանը, մեկ գնդակ էլ խփեց Տիգրան Ոսկանյանը: Արա Հովսեփյանը ձմռան նախապատրաստական շրջանում աչքի է ընկնում արդյունավետությամբ՝ 3 խաղում խփելով 6 գնդակ: «Քինգ Դելյուքսը» 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց: Մինչ այդ աբովյանցիները հաղթել էին «Ուլիսին» (1-0) եւ «Իմպուլս-2»-ին (5-3):

# Մեկնարկում է Մոսկվայի շախմատային փառատոնը

Այսօր Մոսկվայում մեկնարկում է շախմատային հերթական փառատոնը՝ Moscow Open-ը, որի շրջանակներում կանցկացվի 9 մրցաշար: Մոսկվայում մրցավեճի կբռնվեն 1000-ից ավելի շախմատիստներ:

Կանանց գլխավոր մրցաշարում, որը նաեւ Ռուսաստանի գավաթի խաղարկության փուլերից մեկն է, Հայաստանը կներկայացնեն Լիլիթ Գալոյանը (2383) եւ Եվգենիա Դոլուխանովան (2276): Գալոյանն իր վարկանիշով 6-րդն է մասնակիցների մեջ: Ամենաբարձր վարկանիշն (2481) ունի Թուրքիան ներկայացնող Եկատերինա Աթալիկը: Իսկ Դոլուխանովան իր վարկանիշով 19-րդ տեղում է:

2010-ի Հայաստանի չեմպիոն Ավետիք Գրիգորյանը կմասնակցի 10 ուսանող գրոսմայստերների միջեւ անցկացվելիք շրջանաձեւ մրցաշարին: Ավետիքն իր վարկանիշով (2621) զիջում է միայն ռուսաստանցի Մաքսիմ Մատլակովին (2625): Նրա մրցակիցների թվում են նաեւ ամերիկացի Ռեյ Ռոբսոնը (2596), ուկրաինացի Յարոսլավ Ժերեբուխը (2594), Իսպանիան ներկայացնող Ալեքսանդր Իպատովը (2586), լեհ Դարիուշ Սվերչը (2583), ռուսաստանցիներ Վլադիմիր Բելոուսը (2522), Ալեքսեյ Ռեշյոտնիկովը (2514), Անդրեյ Ստուկոպինը (2460) եւ թուրք Մուստաֆա Իլմազը (2521):

Պատանիների մրցաշարում հանդես կգան 17-ամյա Դավիթ Շահինյանը, 14-ամյա Տիգրան Հարությունյանը եւ 13-ամյա Մանուել Պետրոսյանը:

# Առանց հաղթանակի

Ջիբրալթարում ընթացող շախմատի մրցաշարի 3-րդ տուրում հայ շախմատիստներից ոչ մեկին չհաջողվեց հաղթանակ տոնել: Սերգեյ Մովսիսյանն ու Վարուժան Հակոբյանը հաշտություն կնքեցին համապատասխանաբար Կայդո Կուլաոտսի եւ Իրինա Կրուշի հետ: Իսկ ահա Գաբրիել Սարգսյանն անդրանիկ պարտությունը կրեց Սաբինո Բրունելոյի հետ մրցավեճում:

3 տուրից հետո աղյուսակը 100 տոկոսանոց արդյունքով գլխավորում են Նայջլ Շորթը, Մայքլ Ադամսը, Հոու Յիֆանը, Սաբինո Բրունելոն ու Ռուբեն Ֆելգաերը:

Սերգեյ Մովսիսյանը վաստակել է 2,5 միավոր, Գաբրիել Սարգսյանն ու Վարուժան Հակոբյանն ունեն 2-ական միավոր:

# Թբիլիսիում տատամի դուրս կգան 10 ձյուդոյիստներ

Այսօր Թբիլիսիում մեկնարկում է ձյուդոյի տղամարդկանց աշխարհի գավաթի հերթական փուլը: Հայաստանից Վրաստանի մայրաքաղաքում տատամի դուրս կգան 10 ձյուդոյիստներ՝ Արթուր Վարդանյանը, Գրիգոր Իվանյանը, Դավիթ Մկրտչյանը (բոլորն էլ՝ 60 կգ), Արթուր Երանոսյանը, Փայլակ Վարդազարյանը, Տիգրան Վարոսյանը (բոլորն էլ՝ 66 կգ), Արտյոմ Բաղդասարյանը, Անդրանիկ Չափարյանը (երկուսն էլ՝ 81 կգ), Հակոբ Առաքելյանը (100 կգ) եւ գերծանրքաշային Ազատ Աբրահամյանը:



Գայանե Հարությունյանն (48 կգ) ու Ժաննա Ստանկեւիչը (57 կգ) կմասնակցեն Սոֆիայում կայանալիք աշխարհի գավաթի փուլին:

Թբիլիսիի մրցաշարից հետո Հայաստանի առաջատար 4 ձյուդոյիստները՝ Հովհաննես Դավթյանը (60 կգ), Արմեն Նազարյանը (66 կգ) եւ վերը նշված 2 ձյուդոյիստուհիները կմասնակցեն փետրվարի 4-ին Փարիզում կայանալիք «Մեծ սաղավարտի» մրցաշարին:

# Շարապովան հարուստ է Բեքհեմից

Bloomberg գործակալությունը հրապարակել է աշխարհի ամենահարուստ մարզիկների ցանկը: Առաջատար եռյակը կազմել են ամերիկյան ֆուտբոլի ներկայացուցիչներ Դրյու Բրիսը, Արոն Ռոջերսը եւ Թոմ Բրեդին: 4-րդ տեղում «Մայամիի» բասկետբոլիստ Լեբրոն Ջեյմսն է, որին հաջորդում են թենիսիստներ Ռաֆայել Նադալը, Ռոջեր Ֆեդերերը եւ բասկետբոլիստ Շաքիլ Օ՛ Նիլը, որն անցյալ տարվա հունիսի 1-ին հրաժեշտ էր տվել մեծ սպորտին:

Ցուցակում մեծ թռիչք է կատարել Մարիա Շարապովան, որը 83-րդ տեղից բարձրացել է 33-րդ հորիզոնական՝ առաջ անցնելով «Լոս Անջելես Գելեքսիի» կիսապաշտպան Դեւիդ Բեքհեմից: Վերջինս 19-րդ տեղից նահանջել է 58-րդ հորիզոնական: Շարապովայի ունեցվածքը գնահատվում է 24,5 մլն դոլար: «Մեծ սաղավարտի» 3 մրցաշարերի հաղթող Շարապովան թենիսիստուհու իր կարիերայում 16,5 մլն պարգեւավճար է ստացել: Գումարի մյուս մասը նա վաստակել է գովազդային պայմանագրերից:

# Ուժեղագույնը ռուսական զույգն է

Մելբուռնում ընթացող թենիսի Ավստրալիայի բաց առաջնությունում հայտնի դարձավ կանանց զուգախաղի հաղթողը: Գլխավոր մրցանակը շահեցին ռուսաստանցիներ Վերա Զվոնարյովան ու Սվետլանա Կուզնեցովան, որոնք եզրափակիչում պարտության մատնեցին Սառա Էրանի-Ռոբերտա Վինչի իտալական զույգին (5-7, 6-4, 6-3):

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ




**Վաճառվում է**
**Daewoo Matiz Best**
մակնիշի ավտոմեքենա 2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 5000 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ ապակիները էլեկտր. (full), գործարանային վիճակ:
**Հեռ.՝ (091) 32-88-89**

**Վաճառվում է**
**Range Rover Westminster**
2003/2004 թթ., մոխրագույն, շարժիչը՝ 4,4 լ., (full): Մախսազերծված չէ: Գերազանց վիճակ: Գինը՝ պայմանագրային:
**Հեռ.՝ 096 92 34 15:**

**ՎԱՐՁՈՎ Է ՏՐՎՈՒՄ**
**ավտոտնակ-պահեստ (11մx4մx3մ) չափերի «Ֆիրդուսանցի» հարակից տարածքում:**
**093-42-57-92**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| h/h | Գույքի անվանումը | Գույքի քաշը | Աճուրդի պարտադիր պայման | Մեկնարկային գինը |
|---|---|---|---|---|
| | *Աճուրդով օտարվող գույքերի ցանկ* | | | |
| 1 | Սև և գունավոր մետաղներ | 1 319 409 կգ | Աճուրդի հաղթողը պարտավոր է կատարել ապամոնտաժման ընդհանուր ծախսի փոխհատուցումը | 19 506.7 հազ. դրամ |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք Երեւան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աջ տարածքի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ փետրվարի 14-ին ժ.16.00-ին , ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2012թ փետրվարի 14-ը, ժամը 14.00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| h/h | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը /քմ/ | Շինության մակերեսը /քմ/ | Մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Զարենցի փողոց թիվ 76/5 | կաթսայատուն | 2251.36 | 1244 | 498,750,000 |
| 2 | Բոռյան փողոց թիվ 4/3 | կաթսայատուն | 312.48 | 276.08 | 16,200,000 |
| 3 | Ստեփանյան փողոց 1/9 | կաթսայատուն | 163.62 | 133 | 9,200,000 |
| 4 | Վիլնյուսի փող. Թիվ 91/2 | կաթսայատուն | 243.18 | 218.3 | 14,850,000 |
| 5 | Ռուբինյանց փողոց թիվ 24/1 | կաթսայատուն | 158.72 | 158.72 | 14,000,000 |
| 6 | Ռուբինյանց փողոց թիվ6/5 | կաթսայատուն | 353.75 | 344.65 | 15,230,000 |
| 7 | Պ.Ս ակի փող. Թիվ 1/6 | կաթսայատուն | 137.08 | 137.08 | 6,400,000 |
| 8 | Կաթսայատուն Նոր Արեշի 1/25 | կաթսայատուն | 195.5 | 195.5 | 9,867,000 |
| 9 | Արցախի փողոց 8/13 | կաթսայատուն | 439.06 | 439.06 | 32,895,000 |
| 10 | Գ. Մահարու 39/9 | կաթսայատուն | 328 | 328 | 10,093,000 |
| 11 | Աթոյան փողոց անցուղի 18/3 | կաթսայատուն | 441.95 | 441.95 | 22,550,000 |
| 12 | Էրեբունի 1 | կաթսայատուն | 240.72 | 240.72 | 14,325,000 |
| 13 | Էրեբունի փողոց 29/1 | կաթսայատուն | 262.3 | 262.3 | 8,956,000 |
| 14 | Տիտոգրադյան փող. 1/9 | կաթսայատուն | 161 | 161 | 11,466,000 |
| 15 | Տիտոգրադյան փող. 14/6 | կաթսայատուն | 175.75 | 175.8 | 12,668,000 |
| 16 | Խաղաղ Դոնի 31/12 | կաթսայատուն | 308.75 | 308.75 | 19,591,000 |
| 17 | Բաշինջաղյան փողոց h.187/6, h.1 ԿՋՀ | կաթսայատուն | 297.49 | 297.4 | 17,100,000 |
| 18 | ԿՋՀ h.35 Արարատյան 1 | կաթսայատուն | 233.02 | 205.1 | 8,530,000 |
| 19 | Աղոնցի փող h. 3/2 | կաթսայատուն | 207.69 | 207.7 | 8,500,000 |
| 20 | Կոմիտասի պող. 7/12 | կաթսայատուն | 333.46 | 275.3 | 26,750,000 |
| 21 | Ա.Խաչատրյան փողոց թիվ 4/3 | կաթսայատուն | 394.73 | 342.7 | 25,300,000 |
| 22 | Աղոնցի փող. Հ.17/6 | կաթսայատուն | 231.8 | 218.6 | 19,630,000 |
| 23 | Աղոնցի փող. Հ.13/10 | կաթսայատուն | 241.8 | 211 | 18,760,000 |
| 24 | Խաղաղ Դոնի փող. 27/4 | կաթսայատուն | 307.44 | 342.5 | 25,395,000 |
| 25 | Խաղաղ Դոնի փող. 7/8 | կաթսայատուն | 312.78 | 348.1 | 25,258,000 |
| 26 | Պուշկինի 44 | ոչ բնակելի տարածք | | 16.8 | 4,580,000 |
| 27 | Մաշտոցի 20 | ոչ բնակելի տարածք | | 37.8 | 9,745,000 |
| 28 | Մաշտոցի 48շ 78 տար | ոչ բնակելի տարածք | | 7.5 | 1,850,000 |
| 29 | Թումանյան 1անց 28 շենք | ոչ բնակելի տարածք | | 24 | 5,000,000 |
| 30 | Իսակովի պող 36/1 19, շին | ոչ բնակելի տարածք | | 39.9 | 5,350,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք Երեւան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երեւանի քաղաքապետարանում, ինչպես նաեւ Երեւանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երեւանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աջ տարածքի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ եւ մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2012թ փետրվարի 13-ին ժ.16.00-ին , ք. Երեւան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչեւ 2012թ փետրվարի 13-ը, ժամը 14.00-ն:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն 2012թ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իրականացնելու նպատակով հայտարարում է աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթ:

Մրցույթն անց է կացվելու 2012թ. մարտի 20-ից ապրիլի 20-ը:

Մրցույթի հայտերն ընդունվելու են 2012թ. փետրվարի 1-ից մարտի 9 (ներառյալ), յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00-ն՝ ք. Երեւան, Բայրոնի 1 հասցեում:

**Ֆինանսատնտեսական գործունեության իրականացնող աուդիտորական կազմակերպության հավակնորդները պետք է համապատասխանեն հետեւյալ չափանիշներին.**

◆ Բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ: Ընդ որում, բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման 5 տարվա փորձի պահանջը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված եւ http://firm-rankings.vrlfinancial-news.com կայքում տեղադրված ցանկում ներառված ըստ եկամտաբերության՝ լավագույն 10 աուդիտորական կազմակերպություններ),

◆ աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ եւ առնվազն 5 Բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման փորձ եւ միջազգային հաշվապահական եւ (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական),

◆ աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ եւ միջազգային հաշվապահական եւ (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների եւ հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

◆ Միեւնույն պատասխանատու աուդիտորը չի կարող իրականացնել Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է Բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:

**Վերոնշյալ չափանիշներին բավարարող հավակնորդները պետք է Բանկ ներկայացնեն իրենց հայտերը՝ հետեւյալ բովանդակությամբ.**

◆ հավակնորդի տվյալները՝ անվանումը, գտնվելու վայրը (հասցեն), հեռախոսահամարը.

◆ հավակնորդի լիցենզիայի ռեկվիզիտները.

◆ հավակնորդի կողմից աուդիտի անցկացման փորձի մասին տեղեկություններ.

◆ համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված եւ http://firm-rankings.vrlfinancial-news.com կայքում տեղադրված ցանկում ներառված ըստ եկամտաբերության՝ լավագույն10 աուդիտորական կազմակերպությունների ցանկի մեջ մտնելու մասին տեղեկություն.

◆ աուդիտի աշխատանքներին մասնակցող աշխատակիցների որակավորման մակարդակի եւ աշխատանքային փորձի վերաբերյալ տեղեկություններ.

◆ պատասխանատու աուդիտորի աշխատանքային փորձի մասին տեղեկություն:

**Հայտերին կից պետք է ներկայացվեն.**

◆ աուդիտորական կազմակերպության լիցենզիայի պատճենը.

◆ պատասխանատու աուդիտորի միջազգային հաշվապահական եւ (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթի (վկայականի) պատճենը.

◆ աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների միջազգային հաշվապահական եւ (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսն ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթղթերի (վկայականների) պատճենները կամ Հայաստանի աուդիտորների եւ հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորումը հաստատող փաստաթղթերի (վկայականների) պատճենները.

◆ աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրի նախագիծը.

◆ աուդիտորական ծառայությունների համար գնառաջարկը:

Բանկը սույն հայտարարության մեջ նշված չափանիշներին բավարարող հավակնորդների ցանկից ՀՀ օրենսդրությամբ եւ իր ներքին իրավական ակտերով սահմանված կարգով ընտրում է արտաքին աուդիտին, որից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս հետ կնքում է աուդիտորական ծառայությունների մատուցման մասին պայմանագիր: Պայմանագրի համաձայն Արտաքին աուդիտը պարտավորվում է Բանկի առաջադրանքով 2012թ. ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով իրականացնել աուդիտորական գործունեություն, իսկ Բանկը պարտավորվում է վճարել դրա դիմաց: Այն դեպքում, երբ Բանկի կողմից ընտրված հավակնորդը կհրաժարվի Բանկի հետ կնքել պայմանագիր, վերջինս Բանկի իրական վնասները փոխհատուցելու համար պարտավորություն կստանձնի:

**Սույն հայտարարությունը հանդիսանում է օֆերտա անելու հրավեր, իսկ հավակնորդների կողմից ներկայացված հայտերը հանդիսանում են օֆերտա Բանկին:**

***«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ***

հասցե՝ 0009, ք.Երեւան, Բայրոնի 1
Հեռախոս՝ (374-10) 31-88-88
Հեռապատճեն՝ (374-10) 54-34-85
Էլ.-փոստ՝ acba@acba.am
Կայք՝ http://www.acba.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 27.1.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: